



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1875 ԱՄԻՆ

ՆԻՍԻՆ

20 ՅՈՒՆԻՍ 1875



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԴԱՎԱՅԵԱՆ

1875

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

Սանտիան Արարանեան	փաշա	Ա. ԱՅԵԱԳԵՏ
Ռուսինեան	էֆէնտի	Բ. »
Քրիստոսաուր Ղազարոսեան	»	Գ. »
Համբարձում Ս. Ալաճաճեան	»	Ա. ԱՅԵԱԳԵՏ
Գարեգին Մկիթեան	»	Բ. »
Չօղոս Պառնասեան	»	Գ. »

ՋԵՌՆ ՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տ. Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ		ԱՅԵԱԳԵՏ
Տ. Յովաննէս Ք. Մկրտեան		
Նիկողոս Ալաճաճեան	էֆէնտի	

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տիգրան Եսաուֆեան	էֆէնտի	ԱՅԵԱԳԵՏ
Գէորգ Արիմարանեան	»	
Ռուբէն Ալաճաճեան	»	

ԿԱՆՈՒԱՄՈՅ ԴԻՒԱՆ

Քրիստոսաուր Ղազարոսեան	էֆէնտի	ԱՅԵԱԳԵՏ
Յովաննէս Ազնաուրեան	»	
Բարսեղ Հալաճեան	»	

ՀԱՄԱՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Յովաննէս Կասեան	էֆէնտի	
Սանտիան Պէլիկեան	»	
Սիմոն Միքայէլեան	»	

ՅԱՐԱՐԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Առաքել Ալթուն Տիրբի	էֆէնտի	
Տիգրան Ալաճաճեան	»	
Օգսէն Խոճասարեան	»	

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տ. Մատթէոս Վ. Իզմիրեան		ԱՅԵԱԳԵՏ
Տ. Գրիգոր Ք. Աճէմեան		
Սենեքերիմ Մանուկեան	էֆէնտի	

ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Կարապետ Եանյազեան	էֆէնտի	
Յովսէփ Մազարանեան	»	
Սանտիան Փարազեան	»	

ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Խաչատուր Միսաքեան	էֆէնտի	ԱՅԵԱԳԵՏ
Կարապետ Իսթրաճեան	»	
Յարութիւն Մէրեթի-Գուլի	»	

ԲԱՅՈՒՄ 1875 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Ե.

20 ՅՈՒՆԻՍ 1875

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓՍՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

1. Գրիգոր Արքեպիսկ.
2. Խորէն & Նար Պէյ Բ.
3. Ամբրոսիոս Վ. Ռուբինեանց Բ. Պ
4. Գարեգին & Թաթարեան Բ. Պ
5. Խորէն & Կիրոյեանց
6. Կարապետ & Սերոբեան
7. Հմայեակ & Գիմարեան Բ.
8. Մատթէոս & Իզմիրեանց
9. Յովհաննէս & Փարազեան
10. Ներսէս & Ալաճեան
11. Արիստակէս Ք. Մամբրէեան Բ. Պ
12. Գէորգ & Արծրունի Բ. Պ
13. Գրիգոր & Աճէմեան Բ. Պ
14. Խորէն & Փէշիկեան Բ. Պ
15. Յարութիւն & Սերոբեան
16. Յովհաննէս & Մկրտեան
17. Սուքիաս & Ստեփաննոսեան Բ. 2
- 18.
- 19.
- 20.

ԱՇԽԱՏԱԿԱՆՔ

(Ա. Վ. Իճակ)

- Գոռնգալտոն, Կիտիկ փաշա և
Գոռնգալտոնի դուքս
21. Աղաբէգեան Սարգիս Բ.

- Բ. Բացակայութիւն առաջին,
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ,
Բ. Պ Բացակայութիւն բանաւոր
պատճառաւ,
Հ. Հրաժարեալ

22. Աղաբէգեան Կարապետ
23. Ապրո Սաշակ Բ.
24. Գափամաճեան Մինաս
25. Խորասանճեան Յովհաննէս Բ.
26. Մազարանեան Համբարձում
27. Մանուկեան Խաչիկ
28. Մանուկեան Սենեքերիմ Բ.
29. Պառնասեան Պօղոս Բ.
30. Պէրպերեան Գրիգոր
31. Պղտաճեան Յովհաննէս
32. Ռուսինեան
33. Սուրենեան Յովհաննէս Բ.
34. Սարմարանեան Գէորգ
35. Տաթար փէշիկեան
36. Տաթար Ն. Մէլգուրեան
37. Քէրէթեճեան Պետրոս Բ. Պ

(Բ. Վ. Իճակ)

ՊԵՇԻՎԱԿ

38. Բարսեղ Հալաճեան Բ. Պ
 39. Կարապետ Ս. Իսթրաճեան
 40. Յարութիւն Մարգարեան
- Եկնիզարիտ
41. Խաչատուր Ղազարոսեան
 42. Կարապետ Գ. Փարազեան
 43. Համբարձում Իփէկեան
 44. Մարութեան Յրէնկեան

ԽՈՒՄԻՆԱՐ Ս. ԽՈՒՄ

45. Յովհաննէս Շահեան
46. Յովսէփ Ս. Մազարանեան Բ.
47. Սերոբէ Պառնասեան Բ.
48. Ստեփան Ալաճեան

- Խոսիկաւար Ս. Կարապետ
49. Միհրան Պաշտօնաւորեան Բ. Պ
 50. Յովհաննէս Ճիւղեան
 51. Նիկողոս Սլաճաճեան
 52. Տրդատ Փարազեան
- (Գ. Վ. Իճակ)

ԲՆՐԱ

53. Արիկ Ռուսինեան
54. Գրիգոր Սէլիփեճեան
55. Մարտիրոս Յ. Տիլեան
56. Միքայէլ Մամիկեան
57. Նշան Քաղազեան Բ. Պ
58. Ստեփան Խնդիրեան Բ. Պ
59. Տէրմաք Մ. Էքսերճեան Բ. Պ
- 60.
- 61.

ԳԱՄՐԱՎ ՓԱՇԱ

- 62.
- Միջնակայ
63. Կարապետ Պ. Պերեանց Բ.
 64. Յակոբ Կոստանդեան Բ. Պ
 65. Յակոբ Պ. Նորատուճեան
 66. Յովհաննէս Աղապեղեան Բ.
 67. Տիգրան Եսաուֆեան
- Պէյրոզ և Ղալաթիա
68. Յարութիւն Մէրեթի-Գուլի
- (Գ. Վ. Իճակ)

ՂՈՂՈՎԱՆՆԻՅ և իմաստիկ

69. Յովհաննէս Կասեան Բ.
70. Ստեփան Պէլիկեան Բ.

Գատրգիրոյ
 71. Կարապետ Շահապետեան
 72. Մկրտիչ Մուրադեան Բ. Պ
 Կարլուզայիս
 75. Յակոբ Եկեղեցիեան
 Ենիմահալլի Մամաթիոյ
 74. Օրսէն Խօժատարեան
 Թօփղաթիս
 75.
 Էյրուս Ս. Եղիսա եւ Ս. Աստուածածին
 76. Գարեգին Յ. Մեղիքեան Բ.
 Գառնուշեղծի
 77. Ասօփա Իկրապաշեան
 Հիսար եւ Պոյաճի գիւղ
 78.
 Կոր գիւղ եւ Սթեփան
 79. Ղազար Հովեան
 Պարսա
 80. Աստուր Գուշատաշեան
 81. Մկրտիչ Գ. Էսաեան
 82. Յովհաննէս Կրճիկեան Բ.
 Սարակոմրիկ
 85. Յարութիւն Զէնճիրճեան
 84. Յարութիւն Գ. Տատեան Բ. Պ
 (Ե. Վիճակ)
 Մամաթիս
 85. Աւետիս Քօլոշեան
 86. Եղիազար Մեղիքեան Բ. 2
 87. Յակոբ Քաղապետեան Բ. 2
 88. Կաղարէթ Շահապետեան
 89.
 90.
 91.
 92.
 93.
 94.
 Խասպիս
 98. Առաքել Ալթուն Տիւրքի Բ. 2
 96. Խաչատուր Պ. Միսաքեան Բ.
 97. Ռէթէոս Պէլիկեան
 98. Սարգիս Արապեան Բ.
 99. Սիմոն Միքայէլեան
 100.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ
 Կարին
 101. Մանուկ Ասլանեան
 Գեօթմահես
 102.
 Ադրիանոպոլիս
 105. Ռուբէն Կիւմրի շէրտանեան
 Ենիմահալլիս
 104. Տեղբան Կիւմրի շէրտանեան Բ. Պ
 Ակն
 105. Պետրոս Միսաքեան Բ.
 Հարսինսար
 106.
 Արաքիկ
 107. Կարապետ Խաչիկեան Բ.
 Բաղեշ
 108.
 Պրոսպա
 109. Քրիստոստուր Ղազարսեան
 Երզնկիս
 110. Մելքոն Լալաճեան
 Ամասիս
 111. Համբարձում Ալաճաճեան
 Բարոս
 112. Յովհաննէս Ալաճաճեան Բ.
 Եղեւիս
 115.
 Մանուշիքի
 114.
 Համբն
 115.
 Երզնկա եւ Բարեբոյ
 116.
 Թիֆլիստոյ
 117. Տեղբան Գ. Սիմոնեան
 Կիսարիս
 118. Մատթէոս Մ. Ալաճաճեան Բ. Պ
 Խասրեբոյ
 119. Յովհաննէս Եաղճեան
 Պարսիս
 120. Յովհաննէս Յովակիմեան

Մոնզ
 121. Ստեփան Պ. Պ. Փափաղեանց
 Տիֆլիս
 122. Պօղոս Մովսէսեան Բ.
 Զեյթուն եւ Մարաշ
 125.
 Տրապիզոն
 124. Մկրտիչ Կիւմրեան
 Պարսա
 125.
 Տրապիզոն
 126. Թադէոս Թէրեան Բ. 2
 Վան
 127. Սիմոն Մաքսուտեան Բ. 2
 Ալթամար
 128.
 Հարկոյ եւ Ալթամար
 129.
 Մեքսատիս
 150.
 Ռոստոմի
 151.
 Կարս
 152. Աբրահամ Յ. Ալաճաճեան Բ. 2
 Զոյլիս
 155. Համբարձում Սարգիսեան
 Գաղատիս
 154.
 Ատանա
 155. Սիմոն Պ. Նորատուէկեան Բ.
 Սըղերոյ
 156. Մատթէոս Ալաճաճեան
 Եօզրատ
 157.
 Մարաթիս
 158.
 Իզմիր
 159.
 Երզնկա

ՕՐԱԿԱՐԳ

Ա. վերաբերեալ իմ Մամաթիոյ խանութի համար
 Բ. Տեղեկագիր Կարապետից զիմանի ազգային վարչակարգի համարստեղծեանը վերաբերեալ :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ատենաը բացուեցաւ ժամն 7 ին ի ներկայութեան 44 երեսփոխանաց, որոց թիւն ի վերջոյ 60 ի հասաւ :

x.

Ընդունելու ընդունելու ընդունելու ընդունելու ընդունելու
 Ատենապետ փաշան նախընթաց նստի ատենագրութեան վրայ ի զիտողութիւն հրաւիրելով երեսփոխաններն, երբ զիտողութիւն ընող չեղաւ, անմիջապէս քուէի դրաւ զայն, որ միաձայնութեամբ ընդունին ընդունին :

2.

Բացուեցաւ ընդունելու

Ատենապետ փաշան քանի մի երեսփոխանաց նամակները ներկայացնելով, որոնք ճամբորդութեան եւ հիւանդութեան պատճառաւ բացակայ գտնուելու ստիպուած ըլլալին յայտնած էին, անոնց անուններն արձանագրել տուաւ, որք են :

Ճամբորդութեան պատճառաւ բացակայ չալաճեան Բարսեղ էֆէնտի
 Հիւանդութեան պատճառաւ բացակայք՝

- Տ. Գրիգոր քահանայ Աճէմեան
- Տ. Խորէն » Փէհլիվանեան
- Տեղբան էֆէնտի Կիւմրի շէրտանեան
- Ստեփան » Խնդիրեան
- Նշան » Գաղապետեան
- Պետրոս » Քէրէսթէճեան

3.

Հարգուեցաւ

Ատենապետ փաշան ծանուցանելով թէ նորընտիր Նախաքննիչ զիւաններէն Կալուածոց զիւանին անդամ Հալաճեան Բարսեղ էֆէնտին, եւ Յարաբերութեան զիւանին անդամ Ալթունեան Առաքէլ էֆէնտին՝ նոյն զիւաններէն հրաժեշտ մատուցած են, այս հրաժարականաց մասին ժողովին կազմն իմանալու համար քուէի դրաւ, եւ ժողովը միաձայնութեամբ որոշեց ՁԸՆԴՈՒՆԵԼ անոնց հրաժարականը, ինչպէս ըրած էր ասկէ առաջ այլոց նմանեաց :

4.

Տեղեկագիր վերաբերեալ ընդունելու ընդունելու
 Տ. Միքայէլ Կիւմրի շէրտանեան
 Ատենապետ փաշան ծանուցանելով թէ վարչութեան կողմէն զիր մը կայ Սրբազան

Նախագահին ձեռք Մայր զիւանին մատուցուած, ներկայացոյց զայն ժողովին, որ կարկացուեցաւ, եւ ահաւասիկ .

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր Նախագահ Ազգ. Վարչութեան Խառն ժողովոյ

Պատկառելի Վարչութիւնդ՝ իւր 16 Մայիս ժի. նստին մէջ Մասնաժողովոյս պաշտօն տըւաւ Սոյ կաթողիկոսական խնդիրը քննել եւ մեր կարծիքն յայտնել Մկրտիչ Սրբազանին կաթողիկոսութենէ տուած հրաժարականի ընդունելի կամ չընդունելի ըլլալուն նկատմամբ .

Մասնաժողովս փութաց ՚ի նկատողութիւն առնուլ այս խնդրոյն վրայ եղած գրութիւնքն եւ պաշտօնական տեղեկագրութիւնքն, եւ յայտնապէս տեսաւ որ՝

Ա. Կիլիկիոյ վիճակը՝ այս վերջին տարիներս մասնաւորապէս՝ յետին աստիճան բարոյական եւ նիւթական թշուառութեանց մէջ ինկած է, երկպառակութեան եւ կրօնափոխութեան երեսէն .

Բ. Առաջնորդական աթոռները գրեթէ ամենն ալ առանց հովուի մնացած են .

Գ. Սոյ վանքը թափուր, միաբանութիւնը գրեթէ ցրուած եւ բոլորովին անտէրունչ մնացած է .

Դ. Թեմայնոց կողմէն բազմատորագիր հանրագրութիւններ հասած են, որ Մկրտիչ Սրբազանին կաթողիկոսութիւնը չեն ընդունիր եւ նորա անարժանութեան ու անհոգութեան վրայ ծանրապէս բողոք կը բառնան, եւ Վարչութեան անմիջական խնամքը եւ տնօրէնութիւնը կը հայցեն .

Ե. Նոյն ինքն Մկրտիչ Սրբազան կաթողիկոսութենէ կը հրաժարի կրկին եւ կրկին պաշտօնական հրաժարագրերով, եւ ոչ միայն չընդունիր Վարչութեան կողմէ զրկուած 1874 Ապրիլ 24 թուական հրահանգը, այլ եւ կաթողիկոսութիւնը վարելու համար պայման կը դնէ հետեւեալ պահանջումները .

1. Կաթողիկոսարանին Սիւնն ուրիշ տեղ փոխադրութիւնը .
2. Տէրութեան կողմէ տմասական մը սահմանուիլը .
3. Սոյ վիճակաց ընդարձակուիլը .
4. Կաթողիկոսութեան պաշտօնին առաջնորդութիւններէ աւելի արտօնութիւն մը Տէրութեան կողմէ տրուելու կարեւորութիւնը .
2. Մկրտիչ Սրբազան այս պահանջումներով ալ դո՛ւ չըլլալով իւր համար 295-1874 յունիս 12 թուական նամակին մէջ կը յաւելցը-

նէ եւս թէ՛ « չէ թէ միայն այսպէս լոկ վանահայրութեան մը անուամբ, այլ բուն իսկ մեր նախորդներուն ունեցած արտօնութեամբը անդամ չեմք կրնար ընդունիլ եւ վարել այսպիսի ծանր եւ փափուկ պաշտօն մը » :

Մասնաժողովս զայս ամենայն ներկայացնելով պատկառելի ժողովոյդ, կը գիտէ թէ՛ Նախ՝ Մկրտիչ Սրբազանին վերոյիշեալ պահանջումներու շնորհումը՝ ոչ միայն Խառն ժողովոյ կարողութենէն, այլ եւ նոյն իսկ Ազգ. ժողովոյ իրաւասութենէն բարձր են, ըստ որում թէ՛ Սահմանադրութեան տրամադրութեանց հակառակ եւ թէ՛ միանգամայն Առաքելական Ս. Եկեղեցւոյս աւանդութեանցը եւ օրինաց ուղղակի հակառակ են .

Երկրորդ՝ նկատելով որ Մկրտիչ Սրբազան արդէն կը խոստովանի իւր գրութեանց մէջ, թէ ինքը կաթողիկոսական ծանր պաշտօնին անբաւական է, ինչպէս որ զնոյն կը հաստատեն եւ Թեմայնոց հանրագրութիւնք, եւ չորս տարուան տխուր փորձը, եւ Կիլիկիոյ վիճակին այսօրուան ամենազառն վիճակը, եւ կրօնափոխութեանց զգալապէս աճումը եւ կրօնից հեղձեմէ նուազումը :

Աւստի Մասնաժողովս՝ թէեւ այս հրաժարականը ընդունիլ արժան կը դատէ, սակայն ըստ որում Մկրտիչ Սրբազանի պաշտօնի վաւերացումը Ազգ. ժողովէն եղած է, կառաջարկէ որ անմիջապէս պատկառելի Վարչութիւնդ այս ամենածանր խնդիրը ներկայացնէ յատեան Ազգ. ժողովոյ, եւ խնդրէ որ ժամ յառաջ Ազգ. ժողովը իւր որոշումն ընէ թէ՛ արդեօք Սոյ Աթոռոյն վրայ ալ չ'տարածուիր այն որոշումը՝ զոր նոյն ինքն Ազգ. ժողովը նմանօրինակ դէպքի մը մէջ՝ այսինքն Աղթամարայ Աթոռոյ խնդրոյն նկատմա ՚ի սահմանեց ժ. նստին մէջ, որպէս զի Ազգ. Վարչութիւնդ եւս գիտնայ թէ ինչ ապագայ տնօրէնութիւնք պարտին որոշուիլ ՚ի բարեօքումն վիճակի Աթոռոյն Սոյ եւ ՚ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյս ընդ Կիլիկիա համօրէն :

2. սոյն զայս մեր դիտողութիւն փութալով ներկայացնել յատեան պատկառելի ժողովոյդ .

75 Յո. նիս 7 Մնամը խորին յարգանքը Ղալաթիա Իււան Առաջնորդութեան

բարեկարգութեան Մասնաժողովոյ

Արեւմտային	Արեւմտային
ՆԵՐՍԷՍ Վ. ԱՐՄԵՆԵԱՆ	ԽՈՐԷՆ ԱՐՄԵՆԵԱՆ
Անդամ	
ԽՈՐԷՆ Վ. Գ. ԿՈՐՅԵԱՆ	ՍԱՐԳԻՍ ԱՐՄԵՆԵԱՆ
Ս. Ի. ՓԱՓԱՂԱՆ	Ս. ՄԻՔԱՅԷԼԱՆ

ԱՍԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս տեղեկագիրը Վարչութեան կողմէն եկած ըլլալով, զայն իմաստասիրելու համար բնականաբար պէտք է յանձնել իրեն պատկանեալ զիւանին . եւ որովհետեւ խնդիրը հովուական աթոռոյ կը վերաբերի, Իրաւասութեան զիւանին անկ է յղել, Սակայն զիտելու արժանի կէտ մը կայ, այն է թէ Վարչութեան Խառն ժողովն իւր կողմէ կարգեալ Խառն մասնաժողովոյն տեղեկագիրը նոյնութեամբ զրկած է մեզ, առանց իր կողմէն կարծիք մը յայտնելու, մինչդեռ պարտաւոր էր խնդրոյն վրայ լուսաբանութեամբ հանդերձ իւր կողմէ տեղեկագիր մը բերել մեզ . սոյն նկատմամբ թերի կը դանեմ այս տեղեկագիրը :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Ես ալ Ատենապետ փաշային դիտողութեան յար եւ նման պիտի լսելի թէ երբ Վարչութեան կրօն. եւ Քաղ. ժողովները տեղեկագիր մը տան երեսփոխանութեան, իրենց կարծիքն ալ մէկտեղ պէտք է բերեն . այս եկած տեղեկագիրը կը տեսնեմ որ փոխանակ ուղղակի կրօն. եւ Քաղ. ժողովոց կողմէն գալու, Առաջնորդարանաց բարեկարգութեան համար կազմեալ վարչական մասնաժողովէն կուղայ . եթէ ժողովս ուղղակի այդ մասնաժողովին հետ յարաբերութիւն պիտի ունենայ, ուրիշ խնդիր է . իսկ եթէ չը կրնար ունենալ, եւ իրօք ալ անանկ է, Վարչութիւնը պէտք էր տեղեկագրել խնդիրն իւր կարծիքներով հանդերձ :

ԱՍԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում խնդրոյն վրայ Խառն ժողովը մասնաժողով մը աշխատացուցեր է եւ ինքն ալ անոր կարծեաց համամիտ գտնուեր, եւ ըստ որում խնդիրն Ազգային ժողովոյ մէջ վիճաբանութեան չը դրուած մեր զիւաններէն մէկն ալ պիտի աշխատի զայն լուսաբանելու, եթէ ժողովը կը հաճի, ընդունինք տեղեկագիրը եւ յղենք նախաքննութեան :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Կառաջարկեմ նորէն Վարչութեան յղել սոյն տեղեկագիրը, որպէս զի իւր կարծիքն ալ միտցնելով՝ նոր տեղեկագիր մը բերէ :

ԱՍԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըսել է թէ տեղեկագրոյն թերութեան վրայ իմ ըրած դիտողութեանս կծայնակցիք . բայց ես ի վերջոյ բարեփոխեցի, գործը չերկարելու համար առաջարկեցի Նախաքննիչ զիւանին յղել, որովհետեւ Վարչութիւնն ալ մեզ պէս նորուս է կանոնա-

կան ձեւերուն մէջ . ուստի այս անգամ այսպէս ընդունինք եթէ կուղէք :

ՇԱՀՊԱՋԵԱՆ Ն. ԷՖ. — Սոյոք է որ առանց պաշտօնական ձեւերն ունենալու մեզի եկած տեղեկագիրն ըստ օրինի ետ դարձնել պէտք է, որպէս զի պաշտօնական վայելչութիւնը տեղը գտնայ . սակայն Կիլիկիոյ աթոռին թեմերուն որպիսութեան տեղեկ եղողները լա. գիտեն թէ որքան ստիպողական դարձած է այս աթոռին խնդիրը . ես խիստ մօտէն տեղեկութիւն ունիմ թէ շատեր կրօնափոխութեան գիտելու վրայ են : Աւստի պաշտօնական ձեւերու պակասութեան պատճառաւ այս խնդիրը քանի մը շարաթ յետաձգել վնասակար կղտնեմ, եւ կառաջարկեմ որ անմիջապէս նախաքննութեան յղուի եւ կարելի եղածին չափ շուտով պատասխանն ուղուի :

Ուրիշ դիտողութիւն ընող չըլլալով, Ատենապետ փաշան պատրաստուեցաւ Վարչութեան տեղեկագիրն Իրաւասութեան զիւանին յղելու առաջարկութիւնը քուէի դնել :

Փափաղեան Ստեփան էֆէնտին զիտել տուաւ թէ Կիլիկիոյ խնդիրն Իրաւասութեան զիւանէն աւելի Չեանհասութեան զիւանին յղել պատշաճ է :

Ուրիշներ ալ զիտեցին որ պէտք է երկու միացեալ զիւանաց յղել :

Յղման առաջարկութիւնը քուէի դրուելով, ՈՐՈՇՈՒՅՅԱԻ Վարչութեան տեղեկագիրն Իրաւասութեան եւ Չեանհասութեան միացեալ զիւանաց յղել :

55.

Հարցում Ալէքանէան Մարտիէն էֆէնտիէ

Ատենապետ փաշան ծանուցանելով թէ ազգային երեսփոխան Ալիքոսեան Մատթէոս էֆէնտիի կողմէն դրուոր հարցում մը մատուցուած է Գիւանին, ժողովին ներկայացոյց զայն որ կարգացուեցաւ, եւ ահաւասիկ .

Հարցում մը

Ազգային ժողովն իւր նախորդ շրջանին վերջին նիստին մէջ տուրքի օրէնքը հաստատեց, որուն 117 յօդուածը կը տրամադրէ թէ « զանազան տեղեր պանդխտող ազգայինք ըն-

տանկօք բնակութիւն հաստատած տեղ ոյն ազգային անտուկին կը վճարէ իւր տարեկան տուրքը » :

Այս յօդուածով անշուշտ շատ մը անտեղութեանց առաջին անուամբ պիտի լինէր . բայց կը տեսնենք որ փոխանակ Ազգային ժողովոյ որոշումը անմիջապէս գործադրելու , դարձեալ ըստ հին սովորութեան կը վարուի Պատրիարքարանը :

Արդ որպէս զր սոր ազգութեանց արդեամբը չը չփոխենք միտքերնիս , պարտ համարեցայ հարցնել պատկառելի ժողովիս թէ՛ արդեօք ժողովին որ եւ է մէկ որոշումը Վարչութեան կողմէն գործադրելի ըլլալուն համար կրկին որոշման տե ետ կառօտի , Է՛ է անմիջապէս ուր ծաղրելի է :

1875 Յունիս 20 Աղբ. երէ-ի-ի-ան
Կ. Պօլիս ՄԱՅՅԻՍՍ ԱԼԷՔՍԱՆԵՍ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ինչպէս որ կտեսնէք , երեսփոխան մը Վարչութեան յղուած մէկ օրէնքին անգործադրութեան մասին պակասութիւն նշմարելով՝ ժողովոյս կիմացնէ եւ կերպիւ մը հարցապնդում կրնէ առ Վարչութիւնն . կուզէ արդեօք Վարչութիւնն անմիջապէս պատասխանել կամ պատասխանելու օրը որոշել . եթէ Քաղ. ժողովոյ զիւանը ներկայ է , կհրաւիրեմ իւր կամքը յայտնել . կրնայ Սրբազան Նախագահն ալ եթէ ուզէ Վարչութեան կողմէ պատասխանել :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄԻՔԱՅԷԼ ԷՖ. — Ես իբր երեսփոխան հարցման ձեւին վրայ զիտողութիւն կրնամ ընել , բայց իբրեւ վարչական մարմնոյ անդամ ըսելիք խօսք չ'ունիմ :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Տեղեկութիւն չունիմ որ պատասխանեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ապա ուրեմն քանի որ Վարչութեան կողմէն ոչ անմիջական եւ ոչ ուրիշ օրվան համար պատասխանելու զոգ կայ , խնդիրը դիւրաւ վերջացնելու համար յղենք պարզապէս Վարչութեան . թող պատասխանը գրով բերէ :

Կիտողութիւն ընող չըլլալով քուէի դրուեցաւ , եւ ԸՆԴՈՒՆՈՒՆԵՑԱԻ :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Քանի որ իրաւունք արուած է երեսփոխանաց , որով խրաքանչիւրն մէյմէկ առաջարկութիւն կամ հար-

ցապնդում կրնայ ընել ժողովին , այս կերպով Օրակարգին խնդիրներն ալ կրնան ետ մնալ . ուստի ասոր մէկ դարմանը մտածել կառաջարկեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սրբազան Հայր , կանոնադրութիւնը տուած է երեսփոխանաց այդ իրաւունքը . մեք որչափ ալ նեղուինք , պէտք է հանդուրժենք . կանոնը իբր պատրաստ հանդերձ հագեր ենք , կրնայ նեղ գալ , բայց քիչ քիչ կսովորինք . ասկէ զատ դարման չեմ կրնար մտածել , վասն զի կանոնադրութիւնն արդէն ընդունուած է ժողովով :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Չէ թէ կանոնադրական իրաւունք մը զլանալու համար կառաջարկեմ . այլ իմ նպատակս է չափաւորութեան եղանակ մը սահմանել . օրինակի համար՝ եթէ այսօր 50 թուղթ եկած ըլլային երեսփոխանաց կողմէն , ինչ պիտի ընէինք . հարկաւ օրն իրիկուն պիտի ընէինք անոնյամբ . ասանկ չըլլալու համար կարգ մը դնենք՝ որ գոնէ առաջին նստին ներկայացուած թուղթն երկրորդին ձգուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սրբազան Հայր , կը հասկնամ ըսածդ . բայց այսօր գործը մինչեւ 2եր ակնարկած չափազանցութեան հասած չէ . թէ որ ասկէց ետքը պատահի , ետքը ճարը կը մտածենք :



Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա.

ՎԵՐԱԴՆՆԱԻՆԻՆ Սահմանադրութեան

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եկաւ ժամը , յորում օրուան խնդրոյն բուն պիտի հարկանենք , որ է վերաքննութիւն Սահմանադրութեան : Այս խնդիրն որքան պարզ , այնքան մեծ է , այնպէս որ մինչեւ հիւստ ասոր համար թափուած աշխատութիւնը կարժեն . սակայն որչափ ըստ ինքեան պարզ է ըսի՝ այս խնդիրն , այնչափ ալ կնճոտներ է սկիզբէն ի վեր . եւ Յ տարի ալ ժամանակ անցեր է . այսչափ ժամանակին մէջ գոնէ առաջին ընթերցման համար գոցուելու վիճակին հասեր է , բայց դեռ այսօր նոր սկսուելու պէս կուզայ . ինչ է ասոր պատճառը . ուրիշ պատճառ չկայ , բայց եթէ խնդիրն ուղղութեան ճամբէն խոտորեր եւ

ճապարղ ընթացքի մը մէջ մտեր է . իբրեւ Ատենագետ պարտաւորութիւն կզգամ խնդրոյն վիճարանութեան թեւակոխել տալէ յառաջ անոր ուղղութիւնը ձեռք բերելու համար յետահայեաց ակնարկ մը ձգել անցելոյն վրայ : Ուստի ներեցէք ինձ՝ Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրը լուսաբանելու , եւ անոր լուծման ուղղութիւն եւ զիւրութիւն մը տալու նպատակաւ ընդհանուր պատմական տեսութիւն մը ներկայել 2եղ անոր վրայ , որպէս զի հասկնանք թէ որ կէտէ զատուելով ուր հասած ենք , եւ ինչ կը մնայ մեզ ի կէտ նըպատակի համեմուտ :

Այս խնդիրը 1866 Մարտի մէջ ծագած ըլլալը ամենինս գիտենք . եւ այսօր Յ տարի է որ ժողովարանիս Գիւանին վրայ անլուծանելի եւ կախ կը մնայ : Այսքան տարուան մէջ խընդիրն զմեզ չէ զբաղեցուցած , չենք կրնար ըսել . ընդհակառակն . եթէ խնդիր մը կայ որ գրեթէ ամեն նստի կամ Օրակարգին մէջ եւ կամ վիճարանութեան ժամանակ ինքզինք ցոյց տուած է , այս խնդիրն է : Սոյն խնդիրն նաեւ վարչական ասպարէզին մէջ գրեթէ ամեն օր պաշտօնէից ռաքերուն զարնուելով , 2 Պատրիարք եւ մէկ քանի ժողով գլորելէ ետքը , այսօր տակաւին մեր անձնուէր վարիչներուն ամեն մէկ քայլափոխին խոչընդոտներ յարուցանելու վիճակին մէջ է : Իսկ Ազգային ժողովին մէջ այս խնդիրն մինչեւ ցայսօր 4 Յանձնաժողով աշխատացուցեր , 5 ծրագիր ծներ , 2 տեղեկագիր անուցեր , եւ այս օրերս նաեւ տեղեկագրութիւն տեղեկաբեր էֆէնտիի ի վերայ տեղեկագրի զիւանի տիտղոսով տարօրինակ բայց իմաստալից նոր սերունդ մ'ալ ունեցաւ . (Տես Ատենագր. Տուժար երես 250) :

Եթէ մանրադնին հայեցուածք մը ուղղենք խնդրոյն իննամեայ ընթացից վրայ , կը տեսնենք որ այսքան ժամանակի մէջ խնդիրն երկու շրջան ունեցեր է . երկու տարրեր սկզբը րամբք նկատուեր , եւ երկու տարրեր եղանակաւ լուծել առաջարկուեր է :

Ա. շրջանը՝ զոր մէկ բառով նկարագրելու համար կրնանք գէորգի յորջորջել , սկսած է 1866 Մարտի մէջ եւ տեւած մինչ 1875 Յունիս :

Ասոր մէջ Սահմանադրութիւնը քառանկիւնի անուոյ նմանութեամբ անգործածելի նըկատուելով , Բ. Գրան Յանձնաժողովի մը յանձ-

նուեր է , որ մասնաւորապէս վարչական մեքենայն դիւրաշարժ ընելու զիտմամբ , մեծամեծ փոփոխութիւններ ընելով նոր Սահմանադրութիւն մը հեղինակեր է , եւ սն տաճկախօս բարբառով Գոնէն ի պատրիարքարան զալով . եւ Ազգ. ժողովոյ կողմէն երեսփոխանական Յանձնաժողովի մը յանձնուեր է ի քննութիւն . որ յինքնէ նոյն փոփոխութեանց վրայ փոփոխութիւններ բարդելով , նոր ի նորոյ Սահմանադրութիւն մը ծրագրեր , եւ ուղղախօս բայց ոչ զիւրընտել լեզուով եւ կրկին տաղադրութեամբ եւ վերստին սրբազրութեամբ ներկայացուցեր է Ազգ. ժողովին :

Գալով Բ. շրջանին , սն սկսեր է այն օրէն՝ որ 1875 Յունիս 26, ԾԶ. նստին մէջ Ազգ. ժողովն մերժելով ինչ որ առաջին շրջանն իրեն ժառանգութիւն բերեր է , որոշումն բեր է , վերաքննութեան մեծ գործը պատարել Սահմանադրութեան ինքեան անօրինաժտրամադրութեանց համեմատ , եւ այս շրջանը կը տեւէ մինչեւ ցայսօր , եւ իրաւամբ կրնայ կոչուիլ Աղբայէն :

Այս ազգային շրջանին մէջ սահմանադրապէս կազմեալ երկոտասանից Յանձնաժողով մը Սահմանադրութիւնն բոլորովին անգործադրելի չը նկատելով եւ այս անգամի վերաքննութեան համար՝ Սահմանադրութեան միմիայն փորձով զժուարագործադրելի ճանչցուած տրամադրութեանց փոփոխութեամբը դո՛ւ ըլլալ ինչեւէ-լէ-ն քաղաքի մը պատրաստած է , եւ Ազգ. ժողովոյ ներկայացուցած 1874 տարւոյ Մարտի 1 ին , որոյ տիտղոսն անգամ «Փոփոխելի տրամադրութիւնը Սահմանադրութեան » յայտ ածէ վերաքննչաց երկիւղը Սահմանադրութեան վերաքննութեան խնդրէն մինչեւ անգամ անունէն : Սոյն ծրագիրը տարւոյս սկիզբը յանձնուեր է ի նախաքննութիւն Նախաձեռնութեան զիւանին :

Այս զիւանն երկու տեղեկագրի մատուցած է իրեն յանձնուած խնդրոյն վրայ , որոյ Ա. Ը՝ Յունվար 17 ին աստ կարդացուած , կը կրէ Պառնասեան եւ Փափաղեան էֆէնտիներուն ստորագրութիւնները առանց տեղեկաբեր տիտղոսի , եւ երկրորդը՝ զոր վերջին նիստին Ռուսիսեան էֆէնտի մեր բեւը կարդաց , իրմէ միայն ստորագրեալ է իբրեւ տեղեկաբեր :

Ամենինս գիտենք որ սոյն Գիւանի անգամոյ մէջ պատահած թիւրիմացութեամբ չնոր-

հիւն է որ փոխանակ մէկի, երկու տեղեկագիր ընկալաք անկէ. մենք շնորհակալ կըլլանք, եթէ ասոնք մեզ զբաղեցունող խնդիրը լուծելու օգնեն եթէ ոչ երկուքն առանձին առանձին լուսոյ շառաւիղներ արձակելով խնդրոյ մութ կէտերուն վրայ, գոնէ իրար ընդհարկանելով, իրենց շփումէն ծագելիք կայծով:

Այս տեղեկագրոց առաջինը Վերաքննիչ Յանձնաժողովոյ ծրագիրն գրեթէ ամբողջապէս ընդունած, եւ երկրորդն իբր առաջինին ընդլայնումն, նոյն ծրագրոյ ընդունած փոփոխութեանց վրայ մէկ քանի կարեւոր կէտերու փոփոխութիւն աւելցունել կառավարկէ, որով ծրագրին եւ առաջին տեղեկագրին ընդունած սկզբունքն է. հետագային սակաւ ինչ կը հետանայ:

Ես իբր Ատենապետ խնդրոց ամեն պարագայից տեղեկանալու պարտաւորութիւն ըզգալով, սկսայ անցեալ ատենագրութեանց մէջ այս խնդրոյ վերաբերեալ մասերը աչքէ անցունել, եւ տակաւին չլրացուցած, կրնամ ըսել, որ ասոր լուծմանն համար բազում ճիգ թափուեր է մինչեւ հիմա, շատ ճառեր խօսուեր, բաւական բացատրութիւններ տրուեր, մէկ քանի եղանակ կամ ընթացք ընդունուեր, բայց գործը չէ կրցեր ամփոփուիլ, եւ լուծման շաւիղը մտնել:

Հիմա, ժողովը կանոնադրութեամբ բարեկարգեալ ըլլալով, ժամ է եւ վայել այս մեծ գործը գլուխ հանել. եւ արդէն գոհութեամբ կը տեսնեմ որ անոր վրայ ընդհանուր վիճաբանութիւնը ըստ տրամադրութեանց կանոնի սկզբներ է ատենանիս մէջ, բայց դժբաղդաբար կատարելապէս խնդրոյն ընդհանուր սկզբանցն ու ոգւոյն ու ընթացիցը վրայ չէ կեդրոնացեր, այլ աւելի մանր պարագայից եւ մասնաւոր արամադրութեանց քննադատութեան հետ զբաղեր է: Նա մանաւանդ, կէտ մը կայ որ բոլորովին զուրկ մնացեր է վիճաբանական օժուժէն. այն է քննել եւ տեսնել թէ Սահմանադրութեան վերաքննութիւնը նախորդ Յանձնաժողովոյ բրածին պէս հիմնովին ընել պէտք է, եւ հինը մէկդի դնելով, նոր տրամադրութեամբք եւ նոր խմբագրութեամբք նոր Սահմանադրութիւն մը առաջարկել բարձրագոյն իշխանութեան ի վաւերացումն. եթէ՛ ասոր հակառակ եւ այս անգամի համար, ինչպէս վերջին Յանձնաժողովն ու Նախաքննիչ զիւանի

մեծ մասն կառավարկեն, Սահմանադրութեան ինչ ինչ տրամադրութեանց յետ փորձոյ անգործադրելի ճանչցուածներուն միայն փոփոխութեամբ գոհ ըլլալ հարկ է, եւ ասոնց կարգը՝ ընդունել նաեւ այնպիսի տրամադրութիւն մը, որով Ազգ. ժողովն իրաւունք ունենայ փոփոխել եւ վաւերացման առաջարկել երբ եւ ինչ յօդուած որ փոփոխութեան կարօտ տեսնէ յասպարիկի գործածութեան:

Այս խնդիրը խիստ կարեւոր է ի քննութիւն. եւ ըստ որում մինչեւ հիմա վրիպած է ատենաբանից ուշադրութենէն, ժողովին յիշեցունել կը համարձակիմ, որպէս զի ընդհանուր վիճաբանութիւնը չը փակուած՝ սոյն կէտն ալ լուսաւորուի:

Վիճաբանութեան փակումն արտասանեցի, վասն զի կարծեմ ժողովն ալ ինձ նման կը գիտէ, որ յետ այնքան տեղեկագրութեանց եւ ատենաբանութեանց, կը վայլէ որ սկսինք վիճաբանութեան վերջ տալու ընթացք բռնել, որպէս զի խնդրոյն լուծմանն շաւիղը մտնենք:

Հիմա ծրագրին ոգւոյն վրայ ալ վիճաբանութիւնն սկսուեր եւ 4—5 ատենաբանք խօսք առեր են. բարեփոխութեան առաջարկութիւններ ալ եղած եւ Նախաքննիչ զիւանաց զրկուած են. կարծեմ թէ ծրագրին ընդհանուր սկզբանց վրայ սկսուած վիճաբանութիւնը գոցուելու վիճակին հասած է, եթէ ոչ այս նստին գոնէ յաջորդ նիստին մէջ ալ խօսուելէ ետեւ կվերջանայ: Սակայն կէտ մը կայ, Սահմանադրութիւնը պիտի վերաքննենք, ինչ ոգւով եւ ինչ սկզբան վրայ. այս է ահա այն կէտն՝ որուն վրայ ժողովին եւ ատենաբանից ուշադրութիւնը հրաւիրել կուզեմ: Վերաքննութեան համար երկու սկզբունք կայ. մէկը սո է թէ քանի որ վերաքննութեան ժամն ոչ միայն հասած՝ այլ եւ անցած եւ հրամանն ալ Բ. Կոնէն առնուած է, կրնանք ծայրէ ի ծայր վերաքննելով նոր Սահմանադրութիւն մը շինել. միւսն ալ սո է թէ Ազգային շրջանի մէջ եղած ժամանակին Յանձնաժողովոյ ծրագրին ըսածին պէս միայն դժուարագործադրելի կէտերը սրբագրենք, եւ մնացածն ալ ամեն անգամ որ հարկը պահանջէ վերաքննենք. այս ալ վերաքննութիւնը բաց պահել բնի է: Ահա երկու ըսկզբունք կամ եղանակ վերաքննութեան, որուն վրայ մինչեւ ցարդ մէկը չէ խօսեր եւ զիտողութիւն կամ կարծիք մը յայտնէր: Ուս-

տի կխնդրեմ այս պարագայն ալ մեր վիճաբանութեանը նիւթ ընել, կարծիքները հասկնալու եւ ըստ այնմ երկու սկզբանց մէկը կամ միւսն ընդունելու համար: Ահա այս էր՝ զոր կուզէի հասկըցնել ժողովին, — Խօսքն ինչեւեւն է՝

ԻՓԷԿՃԵԱՆ 2. ԷՅ.— Նախաձեռնութեան գիւանէն եկած երկու տեղեկագիր յիշեցիք, Ատենապետ փաշա. արդեօք վերջինն ալ իբր տեղեկագիր ընդունուած է ժողովէն. այս կէտը նախապէս գիտնալ հարկ կգատիմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Վերաքննիչ յանձնաժողովոյ ծրագրին վրայ Նախաձեռնութեան գիւանէն եկած առաջին տեղեկագիրը ժողովոյ նախընթաց շրջանին ԺԲ. նիստին մէջ կարգացուեր ու արձանագրուեր է, որ ատեն ես պատիւ չունէի ժողովոյ Ատենապետն ըլլալու. նոյն տեղեկագիրը Նախաձեռնութեան զիւանին երեք անդամներէն երկուքին՝ այսինքն Պատնասեան եւ Փափազեան էֆէնտիներուն ստորագրութեամբ միայն եկած է եւ տեղեկարբեր չունի եղեր. բայց եւ այնպէս տեղեկագիրն ընդունուելով, Վերաքննիչ Յանձնաժողովոյ ծրագրին ընդհանրութեան վրայ սկզբուեր է վիճաբանութիւնը: Իսկ երկրորդ տեղեկագիրն՝ որ նախընթաց նիստին մէջ կարգացուեցաւ ու արձանագրուեցաւ, Նախաձեռնութեան զիւանին կողմէ Թուսինեան էֆէնտին իբր տեղեկարբեր ներկայացուցած եւ նոյն Գիւանի անդամներէն Պատնասեան էֆէնտին ալ սոյն տեղեկագրին համակարծիք զըտնուելին ինձ մասնաւոր կերպով յայտնած ըլլալով, ըստ իս երկու տեղեկագիրն ալ ընդունուած կհամարուի, եթէ ոչ իբր երկու, գէթ, երկրորդը առաջինին իբր ընդլայնումն եւ ամբողջացումն:

ԻՓԷԿՃԵԱՆ 2. ԷՅ.— Ուրեմն երկուքն ալ ընդունուած նկատելով, իմ զիտողութիւններս երկուքին վրայ ալ պիտի կրնամ տարածել: Վերաքննիչ Յանձնաժողովոյ ծրագրին վրա 74 ի բացման ԺԳ. նիստին մէջ առաջին անգամ խօսք առած ատենս բացատրած էի որ Յանձնաժողովին առաջարկած նոր Տեսուչ ժողովն անընդունելի է, նախ՝ վասն զի հակառակ իր ըսածին՝ Տէրութեան կողմէն վաւերանալու պէտք ունի քանի որ անոր հետ յարաբերութեան մէջ պիտի գտնուի: Երկրորդ՝ վառն զի նախորդ Պատրիարք Խրիմեան Սըր-

բազանին ըրած առաջարկութեանը հակառակ է, — առաջարկութեան մը, զոր ժողովն կատարելու դատած եւ նկատողութեան անուշ ուրոշած էր: Երրորդ՝ վասն զի Վերաքննիչ Յանձնաժողովը փորձառութեան հակառակ վարուեր է, թէ եւ ինք փորձառութեան վրայ հիմնած կցուցնէ իւր առաջարկութիւնները: Ասոնք նորէն միտմի ցոյց տայն աւելորդ եւ ժամանակի կորուստ կհամարիմ:

Ար յիշէք անշուշտ որ Վերաքննիչ յանձնաժողովը զանազան տեղերէ զիտողութիւններ պահանջած էր Սահմանադրութեան գործադրութեան վրայ, որպէս զի վերաքննութիւնը փորձառութեան վրայ հիմնէ: Ար յիշէք նաեւ որ ես ալ իմ առաջին խօսքիս մէջ ցոյց տուած էի որ յանձնաժողովն որքան ալ այդ զիտողութիւններն ինք պահանջած է, սակայն եկած զիտողութիւններն գրեթէ բնաւ նկատողութեան չէ առած: Եթէ յանձնաժողովն տեղեկագիրն ու անոր պարունակած վերաքննեալ կէտերն ուշի ուշով կարգաք, պիտի տեսնէք որ գրեթէ միայն նախորդ Քաղաքական ժողովոյ սահմանադրական զիտողութիւններն ուշադրութեան առած է: Չեմ ուզեր նախորդ Քաղաքական ժողովոյ սահմանադրական զիտողութիւնները միւսներուն հետ բաղդատելու ելնել եւ անոնցմէ որունն աւելի կարեւոր եւ օգտակար ըլլալը ցուցնել հոս, միայն սո պէտք է գիտնալ թէ դաւառներէն եկած սահմանադրական զիտողութեանց մէջ բաւական օգտակար եւ նկատողութեան արժանի կէտեր կան, զորս Վերաքննիչ յանձնաժողովը բնաւ ուշադրութեան չէ առեր, ինչպէս որ իմ առաջին խօսքիս մէջ մանրամասնօրէն ցոյց տուած եմ արդէն: Ուրիշ բան մ'ալ կայ յանձնաժողովոյ տեղեկագրին մէջ. կը տեսնենք որ զանազան գաւառներէ հասած սահմանադրական զիտողութեանց մէջ բողոքներ ալ կան Վարչութեան դէմ. այս բողոքախօսն զիտողութիւններէն սո կը հասկնանք որ Վարչութեան ազդեցութիւնը գաւառաց մէջ բաւական տկար է: Այս կէտն՝ որ իբրեւ Սահմանադրութեան հիմնական խնդիր հարկաւ ուշադրութեան արժանի է, բնաւին անտես եղած եւ յանձնաժողովին ուշադրութենէն վրիպած է: Կաղաչեմ որ միտքերը չի նախապաշարուին, եւ չը կարծուի թէ քննադատութիւնս կողմնակալութեամբ կընեմ: Որ եւ է՝ տեղեկագիր որ հոս կուգայ ժողովին,

երեսայթի կամ ձեւի վերաբերեալ չեն : Արդէն Ռուսիոյնեան էֆէնտի նախորդ նստին իւր բե-
րած տեղեկագրովը ցոյց տուաւ թէ Վերաբըն-
նիչ յանձնաժողովն ամենակարեւոր շատ կէտեր
զանց ըրած է , ինչպէս են թաղային ժողովոյ
հաստատութիւնը , եւ երեսփոխանաց բաշխման
եղանակը : Հիմա կը մնայ ինձ Ռուսիոյնեան է-
ֆէնտի տեղեկագրին պարունակած հիմնական
կէտերուն վրայ իմ կողմէ բան մ'ալ աւելցնել :

ԱՅն աստիճանագրական ազգաց մէջ իշ-
խանութեան բաշխման ձեւը մեծամեծ դժուա-
րութեանց եւ չարեաց իսկ պատճառ եղած է ,
Ի՞նչ կը հասկըցուի իշխանութեան բաշխում
ընկողմ : Կենթագրուի թէ իշխանութիւնն ազ-
գէն կը բղխի . եւ որովհետեւ ազգը միասնադոյն
չէ կարող գործել , իր մէջէն մաս մը կընարէ
եւ անոր կը յանձնէ իր իշխանութիւնը : Այս
մասն ալ ազգէն ընդունուած իշխանութեան
մէկ մասը այլ եւ այլ ժողովոց կամ պաշտօնէից
կը յանձնէ : Մեր ազգային Սահմանադրութե-
նէն ալ կենթագրուի թէ Ազգն իւր իշխանու-
թիւնը Երեսփոխանական ժողովոյ տուած է .
Երեսփոխանական ժողովն ալ իւր իշխանութե-
նէն մաս մը Նախագահին , մաս մ'ալ վարչա-
կան ժողովոց տուած է : Իշխանութեան բաշխ-
ման խնդիրը մեծ է եւ հատորներ կրնայ զըր-
ուիլ անոր վրայ . ես շատ կարճ պիտի խօսիմ :

Գիտէք որ իշխանութիւնը թէ ժառանգա-
կան ըլլայ եւ թէ սահմանագրական , զլլա-
ւորագէտ երեքի կը վերածի , այսինքն օրէնք
գնել , գործադրել եւ դատել : Միապետական
իշխանութեան մէջ մէկ անձ մ'է թէ օրէնք
գնողը , թէ գործադրողը եւ թէ դատողը :
Բայց երբ ազգաց մէջ Երեսփոխանութիւն կը
գոյանայ , այդ երեք տեսակ իշխանութիւնք
կեկտին իրարմէ զատուիլ : Փորձով տեսնուած
է որ երբ գերագոյն իշխանութիւնն անբողջա-
պէս մէկ ժողովի կը յանձնուի , շատ անգամ
չարաչար կը գործածուի , զեղծմունք եւ բռն-
ութիւնք տեղի կուենան , թէեւ բազմաթիւ
անդամներէ կազմուած ըլլայ այդ ժողովը .
(տեղ տեղ մինչեւ 300 եւ աւելի անգամ կու-
ենան Երեսփ. ժողովները) : Յառաջագէմ եւ
փորձառու ազգերն երկու մասի կը բաժնեն իւ-
րենց օրէնսդիր ժողովը . մէկը բազմաթիւ ,
միւսը սակաւաթիւ , որով գերագոյն իշխա-
նութիւնն այդ երկուքին մէջ բաժնուած կըլ-
լայ : Ինչպէս գիտէք , Գաղղիա ալ վերջապէս

իր կրած բազմամեայ քննարկէն խրատուե-
լով ընդունեց գերագոյն իշխանութիւնն եր-
կու ժողովոց մէջ բաժնելու սկզբունքն : Ու-
րեմն իշխանութիւնն իշխանութեան դէմ դնե-
լու է , այնպէս որ զիրար հակակշռելով ոչ
մէկն եւ ոչ միւսն ունենայ գերագոյն իշխա-
նութիւն . այլ միանալով կարենան կազմել այդ
իշխանութիւնն : Աշխարհիս մէջ իշխանութեան
ամենէն խմատուն կարգն Ամերիկայի մէջ տես-
նուած է . Քոնկրէ մը ունին , որուն իշխանու-
թեան մէկ մասն ալ Նախագահին տրուած է :
Եթէ ժողովներուն մէկն օրէնք մը առաջարկէ ,
միւս ժողովին ալ կերթայ , հոն ալ ընդունուե-
լու է . երբ երկու ժողովներն ալ ընդունեցին ,
անկէ Նախագահին կերթայ : Եթէ Նախագահը
դիտողութիւն ունի , նորէն ժողովներուն կը
դարձնէ զայն դիտողութեանը հանդերձ , եւ
երբ երկու ժողովներն ալ վերափոխ հաստատեն
նոյն օրէնքն , այն ատեն Նախագահը կգործա-
դրէ : Այս կերպով օրէնսդրական իշխանութիւնն
ոչ միայն երկուքի բաժնուած կըլլայ , այլ եւ
Նախագահին անգամ մաս մը օրէնսդրական
իշխանութիւն տրուած կըլլայ . բայց զատ զատ
ոչ ժողովներն եւ ոչ Նախագահը բացարձակ
իշխանութիւն ունեցած կըլլան , այլ փոխա-
դարձաբար իրարու իշխանութիւնը կ'ակակըշ-
տեն : Իշխանութեան բաշխման խնդիրը Ռու-
սիոյնեան էֆէնտին թերեւս ինչ ալ աւելի շա-
ուսումնասիրած է , բայց կարելի է որ մեք
Ազգին համար այս կերպ բաշխումն անգոր-
ծադրելի դատելով չէ առաջարկած :

Նկատողութեան արժանի ուրիշ կարեւոր
կէտ մ'ալ կայ , այն է թէ Վարչութեան ճիւ-
ղերու ընտրութիւնն որով կ'վերաբերի : Այս
խնդիրն արդէն ընդ երկար զբաղեցուցած է
զմեզ , Քաղաքական ժողովը ալ իբրեւ Վար-
չութեան ճիւղ մը նկատելով ես ալ այն կար-
ծիքէն եի թէ անոր ընտրութիւնը պէտք է
Ս. Պատրիարքն ընէ : Բայց երբ վարչական
ժողովոց զլլաւոր պաշտօնն Երեսփոխանական
ժողովոյ սակաւաթիւն (որուն յարմար ա-
նունը ժամանակին կը տրուի) անցնի , այն ատեն
հարկաւ անոր անդամոց ընտրութիւնն ալ եւ
Երեսփոխանաց ընտրութեան պէս կըլլայ : Իսկ
գործադիր իշխանութեան ճիւղերու ընտրու-
թիւնը քննականապէս Ս. Պատրիարքը պէտք է
ընէ , որովհետեւ անոնց համար ինք արտասա-
խանատու ըլլալով պէտք է որ իր վստահու-

թիւնը գրաւած անձանց ձեռքով վարէ իշխա-
նութիւնը : Այդ անձանց ընտրութիւնը թէեւ
Ս. Պատրիարքը պէտք է ընէ , բայց անոնք մի-
անգամայն պատասխանատու պէտք է ըլլան
նոսր Երեսփոխանական ժողովին :

Արդ՝ իշխանութեան բաշխումն այսպէս
պէտք է ըլլայ . Ա. Օրէնսդրական ժողով մէկ
բազմաթիւ եւ մէկ սակաւաթիւ մասէ կազ-
մեալ . Բ. սակաւաթիւ ճիւղին պաշտօնը պէտք
է ըլլայ միանգամայն արդիւն յարեցնելու .
Գ. Վարչութեան ճիւղերու անդամոց ընտրու-
թիւնը Ս. Պատրիարքը պէտք է ընէ : Ասոնք են
մեա իշխանութեան բաշխման մասին իմ դի-
տողութիւնքս :

Այս միջոցին Ատենապետ փաշան ունկըն-
դիք երեսփոխանաց ոմանց վրայ անհամբերու-
թեան ցոյցեր նշմարելով , հրաւիրեց Ատենա-
բան էֆէնտին , եզրակացնել իւր դիտողու-
թիւնները :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ . — Այդ՝ ատենաբա-
նից ազատութիւնը սեղմել է . մտիկ ընել չու-
ողոր դուրս կրնայ ելնել . իսկ ատենաբանը
պէտք է շարունակէ եթէ հարկ ըլլայ մինչեւ
Չ—Տ նիստ :

ԱՅՆՍԱՊԵՏ ՓԱՇԱ . — Երբ ժողովը լուսա-
բանուեցայ կրտէ , ատենաբանին պարտքն է
լմնցնել :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ . — Ատենաբանու-
թիւնը չկրնար բռնաբարուիլ ըստ կանոնի :

ԱՅՆՍԱՊԵՏ ՓԱՇԱ . — Ես ժողովին վիճակն
խնայնել պարտաւոր էի եւ խնայուցի . կուզէք՝
մտիկ ըրէք , կուզէք՝ մի ընէք :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՅ . — Ես եզրակացութիւնս
ըրի . բայց դուք երեւի թէ չի լսեցիք . Ատե-
նապետ փաշա , իսկ անհամբերութեան ցոյցե-
րուն համար յապուշ կկրթիմ եւ խորին ցաւ
կզգամ մեր վիճակին վրայ : Գուք ինքնին պահ-
մ'առաջ ըսիք թէ Վերաբընութեան խնդիրն
այնչպի կարեւոր է եւ մեծ՝ որ ինք տարիէ ի
վեր Ազգն ու ժողովն զբաղեցուցած է . ուրե-
միս թէչպէս կարելի է վեր ի վերոյ եւ հապ-
ճեպով կատարել այդ գործն : Երկար խօսիլը
զիւրիս բան չէ , մանաւանդ տկար անձանց
համար , բայց պարտքս է խօսիլ , ինչպէս —
համարձակ կըսեմ — ուրիշներուն պարտքն ալ
լսել է : Մեք փոխանակ ժամը վեցին գալու ,

ութիւն կուզանք , եւ երկու ժամ անգամ ձանձ-
րութիւն յանձն առնուլ չենք ուզեր

ԱՅՆՍԱՊԵՏ ՓԱՇԱ . — Եթէ եզրակացութիւն
նիդ ըրիք , խօսքն ուրիշին պիտի տամ :

ՄԷԿ ԿՈՂՄԷՆ ԶԱՅՆԵՐ . — Շարունակեցէք .
ՄԻՒՍ ԿՈՂՄԱՆԷ ԶԱՅՆԵՐ . — Բաւական է ,
համառօտեցէք :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՅ . — Դիւանը յաճախ ընդ-
միջել սովոր է ատենաբանից խօսքը . պէտք չէ
այս աստիճան ընդմիջել :

ԱՅՆՍԱՊԵՏ ՓԱՇԱ . — Դիւանին պատուոյն
դէմ մի խօսիք . Դիւանը պարտք մ'ունի զոր
խղճի մտօք կատարել կրաղձայ . այն է յուղ-
ղութիւն ածել խնդիրն երբ իւր սահմանէն հե-
ռանայ :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՅ . — Ուրեմն թոյլ տուէք
որ շարունակեմ :

ԱՅՆՍԱՊԵՏ ՓԱՇԱ . — Շարունակեցէք , բայց
եզրակացութիւննիդ ինչ է նէ այն ալ ըսէք :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՅ . (Շարունակելով) Սահ-
մանագրութեան վերաբընութիւնն Ազգին կեն-
սական խնդիրներէն մէկն է , քիչ խօսքով չը
լմնար եւ պէտք չէ որ լմնայ :

Արդ՝ կամփոփեմ ըսածներս : Ռուսիոյնեան
էֆէնտի առաջարկած հիմնական կէտերն են ,
Բարձր ճիւղն հարեցնելու , Երեսփոխանաց
Բարձր ճիւղն Երեսփոխանաց վրայ էլեւնելու ,
Ես ալ յաւելցուցի ասոնց վրայ էլեւնելու .
Ես ալ յաւելցուցի ասոնց վրայ էլեւնելու ,
Ես ալ յաւելցուցի ասոնց վրայ էլեւնելու :

Մեր Սահմանագրութեան մէջ մեծ թերու-
թիւն մ'ալ կայ , այն է զատական գործոց
մասը : Արդէն ըսի թէ երեք են գերագոյն իշ-
խանութեան ճիւղերն . Օրէնսդրական , Գոր-
ծադրական եւ Գատաստանական : Շատ անգամ
մեր Վարչութեան ժողովներն անպէտ խնդիր-
ներու ընտրութեանը եւ զատաստանի կզբաղին
չարաչար . թաղային կուրսերն ու զատերն ալ
մեծ բեռ են Վարչութեան վրայ : Վերաբընու-
թեան միջոցին անպատճառ պէտք է ուշա-

զրուածեան առարկայ ընել նաև դատական իշխանութեան օրինաւոր կազմակերպութիւնը :

Վերաքննիչ յանձնաժողովը ըսած է եւ Ռուսիոյնեան էֆէնտին ալ հաստատելով կրկնեց թէ Սահմանադրութիւնն ընդարձակ է, եւ շատ մը աւելորդ բաներ կազարուանկէ իր մէջ, եւ յիրաւի Սահմանադրութեան մէջ 4—5 տեսակ բան կայ : մէյ մը՝ բուն սահմանադրական օրէնք . երկրորդ՝ երկրորդական օրէնք . երրորդ՝ ներածութիւն կամ բացատրութիւն օրինաց . չորրորդ՝ կանոնք եւ հրահանգ : Երբ այս աւելորդ բաները դուրս ձգուին, տարակոյս չկայ թէ Վերաքննիչ յանձնաժողովոյ այն երկուքը թէ երբ Վերաքննութիւնը հիմնական կերպով ըլլայ՝ երկար ատեն կուշանայ վաւերացու մը Բ. Գոնէն, իսպառ կիրարատի :

Վերջական դիտողութիւններս պիտի ընեմ համառօտիւ յանձնաժողովոյ վերաքննութեան արդեանց վրայ, զորս եօթն յօդուածի մէջ ամփոփած կեներկայացնէ մեզ : Ա. Տեսուչ խորհրդոց վերաբերեալ առաջարկութիւնը հերքեցի արդէն : Բ. Կրօնական եւ Քաղաքական ժողովոց եւ Տեսուչ խորհրդոց անդամոց թիւը նուազեցնելու սկզբունքն ընդունուած է արդէն ժողովէս : Գ. ժողովոց եւ խորհրդոց համարատուութեան տարեկան ըլլալը հարկաւոր բարեփոխութիւն մ'է . բայց անդամոց անմիջական վերընտրելութիւնը փաստակար է : Այդ սկզբունքին փաստակար ըլլալն ուրիշ ազգաց մէջ երկար փորձառութեամբ տեսնուած ըլլալով, հարկ չկայ որ մեք ալ նոր փորձ մ'ընելու ելնենք այդ մասին : Վարչութեան անդամները կրնան վերընտրելի ըլլալ երկրորդ շրջանին, բայց ոչ անմիջապէս : Դ. Երեսփոխանաց փոփոխակի նորոգութեան խընդիրը : Ասի մեր Սահմանադրութեան մէջ աւելի լաւ տրամադրուած է . երկու տարին անգամ մը մասնակի վերանորոգում շատ աւելի օգտակար է քան թէ 5 տարին անգամ մը կէս առ կէս փոփոխութիւնն . ասանկ օրէնք մը զննելն ազգային սահմանադրական ընթացքին մէջ յետադիմութիւն ընել է եւ ոչ թէ յառաջդիմութիւն : Ե. Ընտրողաց կարգալ եւ գրել գիտնալու պայմանը, կարծեմ Սահմանադրութիւնն ընդհանուր կերպով տրամադրած է . . .

ՉԱՏՆԵՐ. — Ո՛չ, ո՛չ, չկայ :
ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Նորէն կյիւցնեմ ատենաբան էֆէնտին, որ յօդուածոց քննու-

թեան շմոնէ . ուրիշներն ալ կսպասեն խօսիլ ընդհանուր սկզբանցը վրայ :

ԻՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ. — Լաւ . ուրեմն ընդհանուր կերպով կըսեմ թէ քանի որ Վերաքննիչ յանձնաժողովոյ ըրած վերաքննութիւնը շատ վեր ի վերոյ եւ թերի է, վերաքննութիւնը պէտք է բուն Սահմանադրութեան յօդուածոց վրայ կատարուի հիմնական կերպով, ինչպէս որ երկար ատենէ ի վեր զգացուած է, եւ վերաքննութեան միջոցին պէտք է նկատողութեան առնուին Ռուսիոյնեան էֆէնտիի առաջարկութիւնքը : Նկատողութեան պէտք է առնուի եւ իմ էլիւն-լիւն բռնի մասին ըրած առաջարկութիւնս կըսէի, եթէ յանդգնութիւն չհամարուէր :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խօսքը ֆօլօլեան է-ֆէնտինն է :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ո՛չ . անկէց առաջ կայ :

Տ. ՄԱՏԹԷՆՈՍ Վ. — Այո . իբրեւ տեղեկաբեր Վերաքննիչ յանձնաժողովոյ խօսքին կարգն իմս է :

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — Իմ ըսելիքս կարճ է . կը խնդրեմ Մատթէոս վարդապետէն ներել խօսից կարգն առնելու համար :

Ինը տարի է կայխատիւք Սահմանադրութիւնը վերաքննելու, եւ դեռ չկրցինք աւարտել : Ըստ իս մէկ երկու կէտի մէջ կը կայանայ վերաքննութիւնը :

Ա. Ռուսիոյնեան էֆէնտին ընտրութեանց համար Կ. Պօլիս 5 թաղային շրջանակի կրթունէ . Քիւզանդեան, եւ Եւրոպական ու Ասիական Վոսթրեան : Ես կը վերցնեմ այս անունները, եւ փոխանակ այսպիսի անուններով քանի մը շրջանակ կազմելու, ինչպէս գաւառներն առանձին առանձին մէյմէկ շրջանակ կը կազմեն, կառաջարկեմ որ նոյնպէս Կ. Պօլիս մէկ շրջանակ ըլլայ, եւ ընդհանուր քուէարկութիւն կատարուի : Երեք շրջանակի բաժնուելով որչափ որ օգտակար կըլլայ, մէկ շրջանակի մէջ ըլլալով անկէ աւելի օգտակարութիւն կունենայ :

Բ. Առաջարկութիւնս թաղային ընտրութեանց համար է . զիս ճանչցողներն ինձ համար միապետական է չեն կրնար ըսել . ամեն թաղ իւր խորհուրդն ինք պէտք է ընտրէ, բայց որովհետեւ գիտենք թէ թաղերուն մէջ ինչ կոտիւնք կը ծագին, որք կզբազեցնեն Վար-

չութեան ժողովները . ուստի կառաջարկեմ որ թաղերը կրկնապատիկ թուով ընտրելի ընտրեն եւ ցուցակը Քաղաքական ժողովին զրկեն . այս ժողովն ալ անոնց մէջէն թաղական խորհրդականներն ընտրէ եւ հաստատէ . այս կերպիւ կիսով չափ կը վերնան թաղային կոտիւնքը :

Տ. ՄԱՏԹԷՆՈՍ Վ. — (Տեղէլ-էլը Վեր-նէլը յան-նէլ-նէլ) :

Տեսնաք Երեսփոխանք

Ժողովրդեան մը կամ Ազգի մը ներկան բարեւաւելու եւ ապագան երաշխաւորելու համար օրինօք կառավարուիլ պէտք է . այս օրէնքը մարդիկ կաշխատասիրեն, եւ Ազգը կամ զայն ներկայացնող ձեռնհաս ժողովը կը նուիրագործէ զայն՝ փորձառութեան եւ ժամանակին բերմանցը համաձայն քննելու պայմանաւ :

Ճիշդ ասոր պէս ասկից տասն եւ հինգ տարի յառաջ ունեցանք մեր Սահմանադրութիւնը . այո . մեր Սահմանադրութիւնը մարդիկ չինցին եւ ի հարկէ փորձառութիւնը եւ ժամանակը պիտի ցուցնէին թէ անոր այս կամ այն յօդուածը փոփոխութեան կարօտութիւն ունի : Նախապէս, առանց մեր Սահմանադրութեան փորձառութեամբ փոփոխելի տրամադրութեանց վրայ խօսելու, պիտի քննեմ թէ օրէնք մը սրբազրելու համար պէտք եղած փորձառութիւնը ինչպէս կստացուի . եւ ապա խնդրոյն պիտի դառնամ եւ պատասխանեմ զլիսաւորապէս Իփէկճեան էֆէնտիի այն առարկութեանց, զոր ըրաւ Վերաքննիչ յանձնաժողովոյ բերած ծրագրին ընդհանրութեան վրայ, ժողովոյս երկու նիստերուն մէջ շարունակած ատենաբանութեամբը :

Օրէնքի մը փոփոխութեան արժանի տրամադրութիւնները գիտցնող փորձառութիւնը ըստանալու համար պէտք է որ այն օրէնքը իր ամէն մասերովը ամբողջ փորձադուր արդարապէս եւ անվրէպ : Վասն զի փորձադուրուն մէջ պիտի երեւի թէ այս կամ այն յօդուածին փորձադուրութիւնը օգտակար չըլլալէն զատ մեծամեծ վնասուց պատճառ կըլլայ այն ժողովրդեան, որ նոյն օրինօք կառավարուելու պարտաւորուած է : Ժամանակին բերմունքը ուրիշ բան չէ բայց եթէ օրինաց փորձադուրու ժամանակին միջոցը, որ փորձառութիւնը

մարմնացնելով երեւան կը հանէ օրինաց փոփոխութեան պէտքը . իսկ եթէ փորձադուրութիւնը մասնակի եղած է՝ փոփոխութիւնն ալ մասնաւոր կրնայ ըլլալ եւ ոչ ընդհանրապէս :

Արդ՝ մեր Սահմանադրութեան փոփոխութեան ընդհանուր փորձառութիւն ստացած ենք արդեօք, ո՛չ . որովհետեւ տակաւին ամբողջապէս փորձադուրուած չէ, որպէս զի Սահմանադրութեան բոլոր յօդուածոց վրայ փորձառութիւն ունենալով փոփոխութեան ձեռնարկելու իրաւունք ունենանք, այլ միայն կեդրոնական Վարչութեան վերաբերեալ մասը ըստ կարելոյն փորձադուրուած ըլլալով անոր վրայ միայն կըրնամք փորձառութիւն ունեցած ըլլալ :

Երեսփոխան Տեսնաք

Սահմանադրութեան Վերաքննիչ յանձնաժողովն ալ որուն անդամակից գանուելու պատիւն ունիմ, այս սկզբան համեմատ Սահմանադրութեան այն յօդուածները միայն փոփոխեց, որոց փոփոխութեանը պէտքը անհրաժեշտ ըրած էր փորձառութիւնը, եւ իր տեղեկագրովը մատոյց Ազգ. ժողովիդ :

Այս տեղեկագրին վրայ ընդհանրապէս խօսելով Իփէկճեան էֆ. հետեւեալ երեք զլիսաւոր առարկութիւնները կընէ :

Ա. Թէ Վերաքննիչ յանձնաժողովը պաշտօնական մարմիններէ եկած դիտողութիւնները նկատողութեան առած չէ :

Բ. Թէ Երեսփոխան Սրբազանի գործնական եւ ստիպողական առաջարկութիւնը նկատողութեան չէ առած եւ Ընդհ. ժողովին չէ բերած . եւ

Գ. Թէ Տեսուչ խորհուրդները ի մի ժողովելով Տեսուչ ժողովի մը գոյութիւն տալովը կուտակուին ըրած է, հակառակ բաժանման սկզբան :

Վերաքննիչ յանձնաժողովը, որպէս զի օրինական փորձառութեան վրայ հիմնէ Սահմանադրութեան մէջ իր ընելիք փոփոխութիւնները, բոլոր ազգային պաշտօնատարներէն յատուկ շրջաբերականաւ ներկայ Սահմանադրութեան հաստատութեան երկրորդ տարւոյն 1884 նոյեմբերի 25 թուականաւ եղած ազգարարութեան համաձայն գիտողութիւն պահանջեց, որպէս զի իրենց փորձառութեամբ ունեցած գիտողութիւննին հաղորդեն . սակայն ութ պաշտօնատարներէ միայն պահանջած գիտողութիւններն ստացաւ :

Վերաքննիչ յանձնաժողովը, որ իր պաշ-

ուսականին վարչական առաջին շրջանին մէջ տեղական եւ գաւառական մասնաժողովներ կազմուեցան : Այս մասնաժողովներուն պաշտօնը միայն իրենց յանձնարարեալ խնդիրները քննել եւ արդիւնքը տեղեկագրել էր վարչութեան :

Փորձառու անձինք կրնան զիտնալ քաջ թէ որչափ մասնաժողովներ չունեցող մարմիններու պաշտօնը սրբալի խարուսիկ եւ կարճատեւ կըլլայ . ճիշդ ասանկ ալ եղաւ այս երկու մասնաժողովներուն պաշտօնը . տեղական մասնաժողովը , որն որ 70—71 ի թուական շրջանին մէջ միայն կրցաւ տեւական ըլլալ եւ յաջորդ 71—72 ի շրջանին մէջ բնաւ չկազմուեցաւ մի եւ նոյն Պատրիարքին եւ մի եւ նոյն Քաղ. ժողովին պաշտօնավարութեան միջոցին :

Պէտք է գիտնալ թէ այս տեղական մասնաժողովը ինչ պաշտօն վարած է մէկ տարուան մէջ . — ինչպէս կը կարգանք 70—71 ի Քաղ. ժողովոյ համարատուութեան տեղեկագրոյն 5—8 երեսներուն մէջ , տեղական մասնաժողովը Տնտեսական Խորհրդոյ պաշտօնը վարած է մինչդեռ Տնտեսական Խորհուրդը Ելեւմտից հոգաբարձութեան պաշտօնը կ'վարէր . եւ երբ Տնտեսական Խորհուրդը իր բուն պաշտօնին կը ձեռնարկէ՝ ան ատեն տեղական մասնաժողովոյ գործ չմնալով հարկ չմնար անոր գոյութեան , հետեւապէս եւ տեղական մասնաժողով չկազմուիր : Քաղով գաւառական մասնաժողովին , որ հազիւ քանի մը ամիս կեանք ունեցաւ եւ գրեթէ բան մը բնաւ չգործեց ինչպէս կերելի 1870—71 ի Քաղ. ժողովոյ համարատուութեան տեղեկագրին 4—5 երեսներուն մէջ . Քաղ. ժողովին սր բեռը թեթեւացուց արդեօք ինչպէս կրսէ Իփէկճեան էֆէնտին : Ես կըսեմ . չէ թէ Քաղ. ժողովին բեռը չը թեթեւացուց , այլ այնքան ծանրացուց որ մէկ երկու անգամ Քաղ. ժողովը իր խորհրդարանին դուռը նոյն Մասնաժողովոյ Նախագահն ու Ատենանապետը ժամերով սպասել տալէն ետքը , անով պատճառ եղաւ անոր ցրուելուն . վասն զի կուզէր ցրուիլը , այլ սակայն չէր ուզէր պաշտօնական կերպիւ գործադրել :

Ահա Խրիմեան Սրբազանի Տեղական եւ Գաւառական մասնաժողովոց վիճակացոյց պատկերը , գործնական եւ ստիպողական ըլլալը . Հարկ է գիտնալ նաեւ թէ այս առաջին շրջանին մէջ , սահմանադրական ժողովներէն ,

խորհուրդներէն եւ հոգաբարձութիւններէն կային միայն Քաղ. ժողով , Տնտեսական խորհուրդ , Գաւառատանական խորհուրդ , Հիւանդանոցի Հոգաբարձութիւն , եւ Ուսումնական անունը կրթականի փոխուած խորհուրդ մը , որ Մայրաքաղաքիս վարժարանաց նկատմամբ բարեկարգական առաջարկութիւններ բրած է միայն , եւ ոչ Սահմանադրութեան պահանջման համաձայն իր հսկողութեան պաշտօնը կատարած : Մինչդեռ ըստ Սահմանադրութեան պարտաւոր էր Խրիմեան Սրբազան Տեսուչ խորհուրդներն ու հոգաբարձութիւններն եւ կրօն . ժողովը ընտրել տալ , վասն զի ան ատեն չկար կրօն . ժողով , չկար Վանօրէից խորհուրդ , չկար կրտակաց հոգաբարձութիւն , չկար Ելեւմտից հոգաբարձութիւն . եւ այս շատ մը պաշտօնական մարմնոց չկայ եղողներուն տեղ երկու մասնաժողովներ կային , որոնցմէ գաւառականին ալ անունը կար՝ ինք չկար :

Քաղով Խրիմեան Սրբազանի պատրիարքական թուականի վարչական երկրորդ շրջանին , այն է 1871—1872 վարչական պաշտօնէութիւններէն կային միայն Քաղ. ժողով , Տնտեսական եւ Գաւառատանական խորհուրդք եւ Հիւանդանոցի հոգաբարձութիւն . ուրկէ կը տեսնուի որ այս անգամ ալ պակսեցան նաեւ կրթական խորհուրդը , եւ Տեղական ու Գաւառական մասնաժողովները :

Խրիմեան Սրբազան՝ հակառակ Սահմանադրութեան Վարչական ժողովոց եւ Տեսուչ խորհրդոց եւ հոգաբարձութեանց ամբողջմնալուն հոգ տանելու , զոնէ այս շրջանին մէջ միայն այս չորս պաշտօնէութեամբ վարչական ամբողջ շրջան մ'անցուցեր է , առանց յայտարարելու թէ անբաւական են այս պաշտօնէութիւնները , պէտք է յաւելցնել եւլն : Եւ երբ երրորդ սահմանադրական շրջանին , Սահմանադրութիւնը ճշդութեամբ գործադրուելով , երկու ժողովք , չորս խորհուրդք , երեք հոգաբարձութիւնք՝ ամբողջ ինը պաշտօնական մարմինք իր շուրջը կը շարունակէ եւ կը գործուին Ազգին ներքին եւ յարաբերական գործերը , ահա այն ատեն Խրիմեանի բերնէն կը լսուի թէ ասոնցմէ զատ երկու պաշտօնական մարմիններ այն է Տեղական եւ Գաւառական մասնաժողովներ եւս պէտք են Ազգին գործերը անօրինելու համար : Ինչ զարմանալի բան . Խրիմեան սրբազան վարչական երկրորդ շրջանին

մէջ ՉՈՐՍ պաշտօնէութիւն բաւական կը տեսնէ Ազգին գործերը անօրինելու , եւ ձայն չհանէր երբէք . իսկ երրորդ սահմանադրական շրջանին ԻՆՍ պաշտօնէութիւնը բաւական չհամարելով երկու մարմիններ ալ աւելցնել կառաջարկէ : Խրիմեան սրբազանի այս առաջարկութեան արժէքը մինչեւ հիմա ըսուածներէն թէ եւ գնահատուեցաւ , բայց ներքեցէք ըսելու թէ Խրիմեան սրբազանի այս ընթացքը հանելուկ մ'էր . Վերաքննիչ յանձնաժողովը ասանկ հանելուկներ լուծելու վարժութիւն նա մանաւանդ պաշտօնը չունէր , եւ առանց հասկըցուած ըլլալու այս պարագաները , այսինքն թէ քանի որ Տեղական եւ Գաւառական մասնաժողովոց պաշտօնավարութեան անտեղութիւնները կային , ինչպէս բացատրեցինք քիչ մ'առաջ . եւ քանի որ երկրորդ վարչական շրջանին մէջ Խրիմեան սրբազանի չորս պաշտօնէութեամբ միայն վարած ըլլալը կար եւ որ եւ է գանգատ կամ դիտողութիւն մ'ընելը չ'կար , եւ երրորդ շրջանին մէջ Սահմանադրութեան պահանջած ինը պաշտօնէութեանց՝ որոյ յարատեւութիւնները կը տեսնուէր , մանուկ պէտք էր ըլլար Վերաքննիչ յանձնաժողովը որ ասանկ առաջարկութիւն մ'ընդունէր եւ առնէր բերէր Ազգ. ժողովիդ : Երբ իրողութիւնները կը խօսին , սոսկ վերացական խօսքերը պէտք է լռեն .

Իսկ Խրիմեան սրբազանի առաջարկութեան՝ Վ. Պոլիսը զատ նախագահով ու ժողովներով զատ գաւառ մը կազմելու առաջարկութեանը վրայ չեմ խօսիր , վասն զի պաշտպանող չունի :

Քաղով Վերաքննիչ յանձնաժողովոյ ծրարագրին ընդհանրութեանը վրայ Իփէկճեան էֆէնտին երրորդ դիտողութեանը , այն է Տեսուչ ժողովոյ նկատմամբ իրաւաբանական կուտակումն է ըսած ըլլալը , կըսեմ .

Իփէկճեան էֆէնտին այս դիտողութիւնը ցրելու համար նախ պէտք է գիտնալ թէ Քաղաքական ժողովոյ պաշտօնն ինչ է . Քաղաքական ժողովոյ պաշտօնն է յարաբերութիւն եւ տեսչութիւն . որոց առաջինը այսինքն Բ. Դըրան եւ այլոց հետ Ազգին ունենալիք յարաբերութիւնները ուղղակի ինք կը անօրինէ . իսկ երկրորդը , այն է Ազգին ներքին գործոց տեսչութիւնը՝ խորհրդոց եւ հոգաբարձութեանց ձեռք . բայց դարձեալ վերջնական որոշումը իրն է . ասանկ որ ոչ ինք ինքնին եւ ոչ խորհուրդք ինքնին չեն կրնար որոշում ընել :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Պարտաւորեալ եմ նորէն ընդմիջել Ատենաբան Հօր խօսքը . կաղաչեմ այդպիսի մանրամասնութեանց տեղը չէ հիմա . քանզի ընդհանրութեան վրայ է խօսք . պէտք չէ միառմի յիշել թէ Խրիմեան Սրբազան ինչ է ըրեր , ինչ ընթացք բռներ է :

Տ. ՄԱՏԹԷՆՈՍ Վ. — Այս մանրամասնութիւններով պիտի հաստատեմ թէ իրենց ուղած գրութեամբ չկրցին բան մը ընել . անցեալին վրայ հիմնելով կուզեմ հաստատել զայս :

ԵՆՆՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — (Երբ չեմ լսու) Ատենապետ փաշա , արդէն կէսն եկաւ , թոյլ տուէք որ մնացածն ալ ըսէ եւ լռենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ինչպէս որ Իփէկճեան էֆէնտին ատենաբանութեան միջոցին քանիցս ընդմիջելով ըսի , մանր պարագաներու մէջ չենք կրնար մտնել . այսօր ընդհանրութեան վրայ միայն խօսելու է : Ուստի կը հրաւիրեմ ատենաբան Հայր սուրբն՝ ընդհանրութեան վրայ շարունակել իր խօսքն :

Տ. ՄԱՏԹԷՆՈՍ Վ. — (Եւ շարունակէ) Ահա վարչական այս կազմութեանէն ծագած է Քաղաքական ժողովոյ եւ Տեսուչ խորհրդոց եւ հոգաբարձութեանց մէջ Ա. յարաբերութեան շփոթութիւն , եւ Բ. պատասխանատուութեան շփոթութիւն , եւ հետեւանք այս երկուքին Գ. անգործութիւն :

Տեսուչ խորհուրդ մը կամ հոգաբարձութիւն մը իր անօրէնութեանը վերաբերեալ խրնդիր մը ձեռք կառնու եւ զայն կարգադրելու կամ լուծելու համար բաւական խորհրդածութիւններ ընելէն ետքը երբ որչափ տալու ժամը կը հասնի , հոն պէտք է սպասէ Քաղաքական ժողովոյ որոշումն առնելու համար . ուստի եւ անոր ատենանը կելլէ խնդիրը իր տեղեկագրովը : Քաղաքական ժողովը յարաբերութեան վերաբերեալ խնդրովք զբաղեալ ըլլալով , հազիւ մէկ քանի նիստերէն կամ լաւ եւս է ըսել ամիսներէն ետքը իրեն տեղեկագրեալ խնդիրը ուղղութեան կառնու եւ կամ կրնդունի կամ ոչ . եթէ ընդունի՝ գործադրուիլը կորոշէ . իսկ եթէ չընդունի՝ չկրնար ինքնին նոր անօրէնութիւն մ'ընել առանց այն տեսուչ խորհրդին կամ հոգաբարձութեան , յորմէ խնդիրն եկած է , կարծիքն առնելու . այսպէս խնդիրը քանի մ'անգամ Քաղաքական ժողովէն Տեսուչ խորհրդին եւ Տեսուչ խորհրդէն Քաղաքական ժողովին ատենաները ման

գալէն Ետքը հազիւ ուրեմն իր լուծուած կրտսանայ : այսպէս են յոյր տեսուչ խորհրդոց եւ հոգաբարձութեանց վերաբերեալ խնդրոց այն է ազգային ներքին գործոց լուծուած : որոց շատը տարիներով անլոյծ կը մնան :

Տեսքը Երեսօրիսանք , այս շփոթութեան եւ այս անգործութեան մէջ նկատելու արժանի կէտեր կան , որք պէտք չէ վրիպին մեր ուշադրութենէն :

Ազգին ամենէն կենսական խնդիրներն են որ այս պատճառաւ կերկարաձգուին , եւ ուշ կը վերջանան , շատ անգամ ամբողջ վարչական շրջան մը անլոյծ կը մնան , որոնք են Տնտեսական Խորհրդոց վերաբերեալ Ազգային կառուածոց եւ պաշտօնական մարմնոց հաշուետուութեան խնդիրները :

Աւսումնական Խորհրդոց վերաբերեալ դատարարութեան մեծ խնդիրը իւր ճիւղերովը .

Վանօրէից Խորհրդոց վերաբերեալ ազգային վանուց նիւթական եւ ուսումնական բարեկարգութիւնը , որք ազգին կարօտութեան գանձերն են եւ ուսումնական յառաջադիմութեան վառարանները : Ատակաց հոգաբարձութեան վերաբերեալ խնդիրները , որք ազգին հարուստութեան ազդիւրներն են , եւ այն եւ այլն :

Ո՛չ որ ի ձէնջ , Տեսքը երեսօրիսանք , կըրնայ ըսել թէ ազգին այս ներքին կենսական խնդրոց այսչափ երկարաձգուելով լուծուելէն օգուտ կը քաղէ ազգը փոխանակ մեծապէս վրնասուելու . եթէ ազգը կը վնասի , ո՞վ է այս վնասուն պատասխանատուն . Բաղաքական Ժողովը . ո՛չ . վասն զի քաղաքական յարաբերութեամբ բեռնաւորեալ ժամանակ չունի , Տեսուչ Խորհուրդներէն կամ հոգաբարձութիւններէն եկած խնդիրները ուշադրութեան առնելու , որուն համար օրինակներ մէջ բերելու հարկ չեն տեսներ . եւ եթէ իր ուշադրութեան առարկայ ընէ՛ չկրնար նոր սնօրէնութիւն մը ընել առանց նոյն խորհրդոց եւ հոգաբարձութեանց կարծիքն առնելու : Տեսուչ Խորհուրդք եւ հոգաբարձութիւնք են պատասխանատու , ո՛չ . վասն զի Քաղ. Ժողովէն ուշ պատասխան կատուեն կամ ընաւ չեն առնուր եւ իրենք ինքնին չեն կրնար գործել առանց Քաղ. Ժողովին . անոն պատասխանատուութեան մասին եւ զամ շփոթութիւնը , որ շատ սուղի նստած է Ազգին տան եւ ճիւղ տարիներէ ի վեր :

Վնաս կը գործուի եւ պատասխանատու չկայ : Յաւալի բան :

Վանօրէից , Աւսումնական եւ Տնտեսական Խորհուրդք իրենց պաշտօնին ընտելեամբը պէտք է որ յարաբերութիւն ունենան մայրաքաղաքիս թաղական Խորհրդոց , դաւառական վարչութեան նմանօրինակ Խորհրդոց եւ վանուց միաբանութեանց եւ սնօրէն ժողովոց ձեռքացն սրչափ դժուարութիւն եւ քանի ժամանակներու կորուստ տալով կրնայ կատարուիլ այս յարաբերութիւնը : Վասն զի կեդրոնական վարչական տեսուչ Խորհուրդները նախ պէտք է գրեն Քաղաքական կամ Խառն Ժողովին . Քաղաքական կամ Խառն Ժողովն ալ այս կամ այն գաւառական վարչութեան , այն ալ քի Խորհուրդներէն մէկուն , եւ նոյնպէս այս կարգաւ պատասխանն ընդունելով Քաղաքական կամ Խառն Ժողովը՝ Խորհուրդներուն պիտի հաղորդէ :

Հարկ չէ ապացուցանել թէ այսօրինակ մեծ գծուարութեամբ եւ ժամանակի կորուստով կատարուած յարաբերութեամբ գործելով սրչափ մեծ վնաս կուտանք ազգային ուսումնական եւ տնտեսական վիճակին . կը թողում մը տածել անոնց , որոնք փորձառութիւն ունենալով կրնան քանի դիս առաւել հասկնալ ազգային ներքին գործոց այս ցաւալի վիճակը : Ան յարաբերութեան շփոթութիւն եւ անգործութիւն որ անհրաժեշտ դարձան կարօտ է :

Այսպէս , Վերաքննիչ յանձնաժողովը Քաղաքական Ժողովին պաշտօնը ծանրաբեռնած տեսաւ , ինչպէս կրտէր նաեւ Խրիմեան սրբազան , եւ նախորդ Քաղաքական Ժողովն ալ իր փորձառութեամբը կառավարկէր . հետեւապէս յանձնաժողովը թէ այս շփոթութիւնները բառնալու եւ թէ Ազգին ներքին կենսական խնդրոց լուծումն փութացնելու եւ կարգադրութիւնը գործնական վիճակի մէջ դնելու համար Քաղաքական Ժողովոյ պաշտօնը երկուքի բաժնել արժան դատեց , որ արդէն Յանձնադրութիւնն ալ կը բաժնէր յարաբերութեան մասը ուղղակի Քաղաքական Ժողովին , իսկ ներքին գործոց սնօրէնութիւնը անոր ձեռքը կադուած տեսուչ Խորհրդոց եւ հոգաբարձութեանց տալով :

Քաղաքական Ժողովը այս ծանրաբեռնութենէն ազատելու համար յարաբերութեան մասը առաջարկուած է Քաղաքական Ժողովոյ անուան տակ թողուլ , եւ տեսչական մասը տեսուչ Ժողովոյ անուան տակ թողուլ , պատանց

մէկը միւսին պատասխանատու ընելու , այլ երկուքն ալ Ազգային Ժողովէն ընտրեալ եւ անոր պատասխանատու ըլլալու պայմանաւ . զայս ընելով Վերաքննիչ յանձնաժողովը թէ պատասխանատուութեան եւ յարաբերութեան շփոթութիւնը բարձաւ , թէ անգործութեան առաջը առաւ , եւ թէ պաշտօնի կոչուող անձանց թիւը քիչնալով ձեռնհաս մարդիկ գրտնելու դիւրութիւն տուաւ :

Կը մնայ արդ գիտնալ թէ չորս մարմին՝ այսինքն , Վանօրէից , Տնտեսական , Աւսումնական Խորհուրդներն եւ Ատակաց հոգաբարձութիւնը , մէկ անուան տակ թէ եւ միացան . քայց իրապէս չորս իրարմէ դատ պաշտօնէն թիւներ չէ միացածը , այլ երկուք . վասն զի Վանական Խորհրդոյ պաշտօնին կէտը Աւսումնական եւ կէտը Տնտեսական է . Ատակացը նոյնպէս . Տնտեսականն յայտնի է ինչպէս եւ Աւսումնականը . այս չորս պաշտօնէութեան մէջ երկու պաշտօնէութիւն կայ Աւսումնական եւ Տնտեսական . այս երկուքին միութիւնը կարելոր եւ խիստ կարեւոր էր , որովհետեւ Տնտեսականը դրամական գործոց պաշտօնէութիւնն է , եւ ըստ որում Աւսումնականն ալ առանց դրամական օժանդակութեան քայլ մ'ալ չկրնար առնուլ , փորձառուք կրնան վիպել այս ճշմարտութեան ուստի եւ Վերաքննիչ Յանձնաժողովը միացուց եւ Ազգ. կեդրոնական Վարչութեան երկու պաշտօնէութիւններուն տեղ աւանանց երեք .

Ա. կրօնական գործոց պաշտօնէութիւն որ է կրօնական Ժողովը .

Բ. Յարաբերութեան պաշտօնէութիւն , որ է Քաղաքական Ժողովը , եւ

Գ. ներքին գործոց պաշտօնէութիւն , որ է Տեսուչ Ժողովը .

Ըստ այսմ եւ գաւառները պիտի ունենան միայն այս երեք Ժողովները :

Հիմայ , ինչպէս կերեւի , Վերաքննիչ Յանձնաժողովը երեք Խորհուրդները եւ մէկ հոգաբարձութիւնները միացնելով չէ թէ կուտակուին ըրած է , ինչպէս կրտէ՛ Կիւիկեան է թէնտին , այլ գործոց բաժանումն ըրած է , Յարաբերութեան մասը Քաղ. Ժողովին եւ Տեսչական մասը Տեսուչ Ժողովին տալով :

Յիրաւի այս չորս մարմինները զսա զսա շարաթիւ չորս նիստ պիտի ընէին , իսկ Տեսուչ Ժողովը մէկ նիստ . քայց ինչ օգուտ չորս նիստ

ընելէն երբ ինքնին առանց Քաղ. Ժողովին չը պիտի կրնային որոշում ընել . եւ Քաղ. Ժողովը դարձեալ մէկ նիստ պիտի կարենայ ընել , ան ալ հազիւ կը բաւէ յարաբերական գործոց : Այս պատճառաւ չորս նիստ ընելով հանդերձ տակաւին Ազգին ներքին կենսական գործերն անլոյծ պիտի մնան , մինչդեռ այս քաժանմամբ Տեսուչ Ժողովը թէ եւ մէկ նիստ պիտի ընէ , եւ սակայն Ազգային Ժողովոյ պատասխանատու ըլլալու պայմանաւ որոշում տալու ձեռնհասութիւն ունենալով մէկ շաբաթի մէջ ըլլալիք ուրոյն ուրոյն չորս նիստերէն աւելի արդիւնաւոր պիտի ըլլայ : Երկարօրէն փաստարանել չուղէր . այս ճշմարտութիւնը փորձառուք կրնան գիտնալ :

Այս էր անա Վերաքննիչ յանձնաժողովոյ Տեսուչ Ժողովոյ մասին ունեցած փորձառական դիտողութիւնները , որոց վրայ հաստատեց իր օժանմանած փոփոխութիւնները :

Արդ՝ որովհետեւ Ատենապետ փաշան թոյլ չտար խօսելու մանրամասնութեան վրայ , որ անոնցմով միայն Վերաքննիչ յանձնաժողովոյ ծրագրին ընդհանրութեան ընդունելի կամ անընդունելի ըլլալը կրնայ փաստարանուիլ , ուստի ծրագրին ընդհանրութեան վրայ մինչ ցարդ եղած դիտողութիւնները ըստ իս բաւական ըլլալով կառավարկեմ որ քուէի գրուի ծրագրին ընդհանրութիւնը եւ անցնինք յօդուածոց քննութեան որպէս զի աղատօրէն խօսինք մեր դիտողութիւնները :

ԻնթիլեճեԱՆ Կ. ԷՅ.— Ինչպէս որ Ատենապետ փաշան ալ իւր յառաջաբանին մէջ յիշեցուց , վերաքննութեան խնդիրը 10 տարիէ ի վեր ծանրացած է այս Ժողովին վրայ . յանձնաժողովներ իրարու յաջորդեցին , քանի քանի տեղեկագիրներ բերուեցան , եւ աակաւին վերաքննութեան գործը չկրցաւ կատարում գրտնել : Ատենապետ փաշան երկու սկզբունք կայ ըսաւ , այս խնդրոյն մէջ . ոմանք կուզեն որ Յանձնադրութիւնը կատարեալ կերպով վերաքննուի եւ գոցուի , հարկաւ որոշեալ պայմանաժամ մը տակ . ուրիշներ ալ կուզեն որ հիմնական կամ կատարեալ կերպով չը վերաքննուի , այլ մասնական եւ շարունակեալ կերպով , այսինքն՝ Ազգային Ժողովն ամեն ժամանակ երբոր պէտք մը տեսնէ , վերաքննութիւն ընէ : Վերջին Վերաքննիչ յանձնաժողովն այս ետքի սկզբունքը բռնած է . քայց

ասիկա աղէկ բան մը չէ : Սահմանադրութիւնը շարունակ վերաքննութեան տակ պահել ըսել է : որով խնդիր յարուցանել ուղղորդու համար դուրը բաց պիտի մնայ միշտ : Ասոր համար ես առաջին սկզբունքը կրնորեմ եւ կառավարկեմ որ վերաքննութիւնը միանգամ ընդ միշտ կատարուի եւ գոցուի յատուկ պայմանաժամի մը տակ , եւ այնուհետեւ խօսք չըլլայ Սահմանադրութեան վրայ , այլ իբր տիրող օրէնք՝ անփոփոխապէս գործադրութեան մէջ մնայ մինչեւ վերաքննութեան որոշեալ պայմանաժամը :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Վերջին տեսնարան Իւթիւճեան էֆէնտին ըսաւ թէ՛ Սահմանադրութիւնը միանգամ ընդ միշտ կատարեալ կերպով վերաքննելէ ետեւ , վերաքննութիւնը գոցել պէտք է : Կարծեմ ինձ հետ ամենքդ ալ կը մտածէք թէ այդ անհար է . վասն զի վերաքննութիւնը գոցելը յատուկութեան զրոնները գոցել ըսել է : Այսօր վերաքննութեան պէտք մը կը տեսնենք , զայն կը կատարենք . վաղն ուրիշ պէտք մը կը ծագի , ինչ պիտի ՚նենք , միթէ վերաքննութիւնը գոցեր ենք ըսելով պիտի կրնանք կանգ առնուլ :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ.— Ես պայմանաժամաւ գոցել ըսի :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Շատ լաւ . ենթադրենք թէ 5 տարի պայմանաժամ գրուեցաւ . միթէ պատահած դէպքերուն՝ որ վերաքննութեան հարկը երեւան հանեն , պիտի ըսենք որ 5 տարի ետքն եկէք : Յիշեցէք , տեսնոք , որ 1864 ին սոյն այս Ազգային ժողովն Սահմանադրութեան ինչ ինչ յօդուածոց վերաքննութեան հարկն զգաց , բայց ըստ որում Սահմանադրութեան 997 յօդուածը 5 տարի պայմանաժամէ ետեւ վերաքննելու իրաւունք տուած էր , սյն ատեն կաշկանդուեցաւ մնաց ժողովը ու չկրցաւ վերաքննութեան մտնել , թէեւ ճանաչեց ասոր պէտքը . հիմա ալ նոյն վիճակին մէջ ժողովը դնելն ինչ կը նշանակէ . միթէ մէկ անգամի եւ շատ սուղի նստած փորձառութիւնը բաւական դաս մը չէ . քանի մը անգամ փորձուելու պէտք ունինք : Ոմանք կըսեն թէ ինը տարի է որ Ազգային ժողովն ծընդարարութեան մէջ է վերաքննութեան մասին . ասի թուական սխալ մ'է , ստոյգը 11 տարի է . վասն զի 1864 ին Ազգային ժողովն այս ցաւին բռնուեցաւ ու չկրցաւ բան մ'ընել :

Յետոյ եկաւ 1866 մարտ 20 ի հարուածը , որով պայմանաժամաւ վերաքննութեան կապերը խզուեցան , եւ անպայման ժամանակի մասնուեցաւ վերաքննութեան աւարտումը :

11 տարիէ ի վեր ժողովս ծննդաբերութեան մէջ է . առաջին անգամ ծնաւ զաւակ մը որ իբր չէր . երկրորդ անգամ ծնաւ զաւակ մը , որ բոլորովին այլափոխեալ էր . եւ իր ուղածը չէր . այս անգամ ալ նոր պիտի ծնի , եւ անս այս վերջին ծննդաբերութեան վրայ է , որ այսչափ հոգք եւ յանձանձանք կըլլան : Երաւ 10-11 տարիներն շատ երկար միջոց մ'են , բայց թէ որ այդ միջոցին մէջ ստացուած փորձառութիւնը նկատողութեան առնուէք , այդչափ ցաւ չպիտի զգանք անցած օրերուն վրայ :

Այս փորձառութեան պտուղն այսօր բազդ ունինք վայելելու . եւ կը տեսնեմ որ շատերնիս եկած միաբանած ենք սա կէտին վրայ թէ այսօր՝ վաղն եւ ուրիշ օր հետզհետէ փորձառութեամբ պէտք է վերաքննել մեր ազգային Սահմանադրութիւնը : Ուստի ես ալ քանի մը դիտողութիւններ կուզեմ ընել եւ ներկայացընել Ձեզ , Երեսփոխան Տեսնոք , թէ Ատենապետ փաշային դիտողութեան եւ թէ Ռուսինեան էֆէնտինն առաջարկութեանց վրայ :

Օրէնքը ժողովրդեան համար կը չինուի . ուստի եւ օրէնսդիրները պարտական են ժողովրդեան վիճակն եւ անոր պիտոյքները նկատողութեան առնուլ . եւ ըստ այնմ սահմանել այն օրէնքները , որ անոնց օգտակար են եւ միանգամայն գործադրելի , Ռուսինեան էֆէնտին կըսէ թէ « Սահմանադրութեան մէջ երեւ « ցած թերութեանց համար պէտք է ներդա « միտ գտնուինք երբ մտածենք թէ Սահմա « նադրութեան առաջին խմբագիրները քանի « քանի զոհողութիւն եւ զիջում ըրած են այն « պիտի պահանջմանց առջեւ , որոց կատարու « մէն կախուած էր Սահմանադրութեան յաղ « թանակը » : Գիտնալ պէտք է թէ այդ պահանջումը մարդոց չէ , այլ ժամանակին . եթէ Սահմանադրութեան առաջին խմբագիրներն իրենց ժամանակին պահանջմանց առջեւ զոհողութիւն եւ զիջում ընելու ստիպուեր են , եւ այսօր ալ ներողութեան արժանի կը դատուին . միթէ Սահմանադրութեան երկրորդ խմբագիրները , այն է այժմեան Վերաքննիչ յանձնաժողոյ անդամները եւ բովանդակ Ազգային ժողովոյ անդամները՝ որ իրենց խորհրդովն ա

քուէովը պիտի մասնակցին այս երկրորդ խմբագրութեան , պարտական չեն արդի ժամանակիս պահանջմանց առջեւ զոհողութիւններ եւ զիջումներ ընելու : Արդարեւ Ազգային ժողովս սա Սահմանադրութիւնը իր արդի փոփոխելի խմբագրութեամբը երբ ապագային յանձնէ , շատ աղէկ դադափար մը տուած պիտի չըլլայ ապագայ սերունդին իր օրէնսդրական կարողութեանը վրայ . բայց եթէ ապագայ սերունդը արդի ժամանակիս պահանջումներն հաշուի առնէ եւ քննէ ու իմանայ , ան ատեն պիտի արդարացնէ զմեզ : Վերաքննիչ Յանձնաժողովոյ անդամներն երկար քննութենէ ետեւ , նոյնպէս եւ Նախաձեռնութեան զլուսնի անդամներն , իրարու հակակարծիք գտնուած ատենին իսկ , եկած միաբանած են . սակէտին վրայ թէ , արդարեւ Սահմանադրութիւնիս սրբագրութեան կարօտ շատ կէտեր ունի իր մէջ , բայց այսօրուան գործ չէ , եւ այսօրուան համար մեր վարչական ընթացքին արդեւ մը չեն յարուցաներ . ուստի փորձառութեամբ արժան դատուած փոփոխութիւններն ընելով , պէտք է ժամ յառաջ Սահմանադրութեան վերաքննեալ մասերը ներկայացնել Կայսերական բարեխնամ Կառավարութեան ի հաստատութիւն , եւ անկէ ետքը փորձառութեամբ հետզհետէ եւ միշտ վերաքննելու իրաւունքնիս գործադրել , Երբ այսչափ մանր քննութիւններու զբաղողներ միակամ կը հաստատեն արդի ժամանակիս պահանջմանց առջեւ սոյն զոհողութիւնն ու զիջումն ընել , ալ հանրկէ արդեօք երկարել եւ մանրամասն բացատրել թէ ինչ են արդի ժամանակիս պահանջումները , որ ինը տարիէ ի վեր բոլոր դիտող աչքերէ վրիպած չեն :

(ՈՂ . - Ը)

Ետնարինք ուրեմն եւ մենք ժամանակիս պահանջմանց , եւ յարմար ժամանակի թողունք համառօտ ու ամփոփ Սահմանադրութիւն մ'ունենալու իղձերնիս գործադրելը : Այս ժամանակն ալ շատ պիտի չուշանայ , հնչպէս կը հաստատեն փորձերը : Վասն զի Ազգային ժողովոյս ներքին Կանոնադրութիւնը դեռ նոր հաստատուելով , անոր վրայ շատերնիս տեսանք թէ Սահմանադրութեան մէջ որ յօդուածներն են եղեր որ ներքին կանոնադրութեան կը վերաբերին , եւ իբրեւ սահմանադրական յօդուած սպրդած եւ տեղ բռնած են Սահ

մանադրութեան մէջ . ներքին Կանոնադրութիւնիս տակաւին առաջին սրբագրութենէ մ'անգամ անցած չէ . այս ալ գործադրուելէն ետքը ժողովս աւելի լուսաւոր դադափար պիտի ունենայ կանոնական յօդուածոց վրայ : Տակաւին Վարչական կանոնագիր մը հաստատուած չէ . զայս ալ հաստատելու ըլլանք , պիտի տեսնենք թէ որ յօդուածներն են որ Վարչական կանոնագրին կը վերաբերին , սակայն սպրդեր ու տեղ բռններ են Սահմանադրութեան մէջ : Ետեւէն կուզայ թաղային խորհրդոց կանոնագիրը , զայն ալ հաստատելու ատենինս Սահմանադրութեան մէջ այս մասին յիշատակուած աւելորդ յօդուածներն աւելի շօշափելի պիտի ըլլան . այսպէս պիտի ըլլայ նաեւ երբ դաստիարակութեան եւ ազգային կալուածոց վերաբերեալ կանոնագիրներ չինենք : Ատոնց ամէնուն վրայ Ազգային ժողովս պէտք է որ դբադի , բայց նախ պէտք է որ այժմեան վերաքննութեան խնդիրն աւարտէ , ասկէ ետքը կրնան գալ միւս կանոնագիրները , որոնց մեծ մասը պատրաստ են եւ Վարչական շրջանի մէջ փորձառութեան ենթարկուած . երբ Ազգային ժողովս իր ներքին կանոնագրին սրբագրութեան հետ յաջողի միւս կանոնագիրներն ալ քննել ու հաստատել , ան ատեն Սահմանադրութեան յաջորդ վերաքննութիւնը շատ դիւրացած կըլլայ . եւ փորձառութեամբ պիտի կարենանք պարզել եւ զտել Սահմանադրական յօդուածները՝ կանոնականներէն եւ ունենալ այնպիսի Սահմանադրութիւն մը , որ միայն Սահմանադրական անփոփոխելի սկզբունքներն ըլլան , եւ միանգամ հաստատուին Կայսերական բարեխնամ Կառավարութենէն :

Եզրակացնելով խօսքս այն առաջարկութեան վրայ , զոր Ատենապետ փաշան իբրեւ վերաքննութեան ընդհանուր վիճաբանութեան խնդիր ժողովս ուշադրութեան ներկայացոյց թէ , վերաքննութիւնը գլխովին թէ մասամբ ընել պէտք է այս անգամ , կը համաձայնիմ Վերաքննիչ Յանձնաժողովին մասամբ ընելու առաջարկութեանը . վասն զի 11 տարուան վերաքննութեան տաղանպէն ետքը խոհեմութիւն չեմ համարիր այդպիսի գլխովին վերաքննութիւն մ'ընելը առանց ժամանակին պահանջմանց ունկն դնելու եւ մանաւանդ փորձառութիւնը այդպիսի հարկ մը երեւան հանած

չէ, եւ հետզհետէ այլեւայլ կանոնադրոց հաստատութեամբը պիտի կարենանք փորձ ունենալ եւ կանոնական ու սահմանադրական յօդուածներն ինքնին իրարմէ բաժանեալ տեսնել:

Արդ կ'անցնիմ Ռուսիոյնեան էֆէնտիի այն երկու առաջարկութեանց, որոնք իբրեւ վերաբըննութեան արժանի կէտեր կը յաւելցնէ Վերաբըննիչ Յանձնաժողովին ծրագրին վրայ:

Թաղային ժողովոց հաստատութեան առաջարկութիւնը իբրեւ փորձառութեան արդիւնք չէ ներկայացած, այլ իբրեւ պակաս կամ զանց առնուած կէտ մը, որ ինչպէս Սահմանադրութեան առաջին խմբագիրներուն, նոյնպէս եւ Վերաբըննիչ Յանձնաժողովոյ ուշադրութեան խոյս տուած է եղեր:

Այս զանցառութիւնը կամ պակասը յայտնի ցուցնելու համար Ռուսիոյնեան էֆէնտի երեք կարգ մատակարարութեան կը բաժնէ ազգային իշխանութիւնը, եւ մինչեւ ցարդ զիտցուածին հակառակ կեդրոնական եւ գաւառական վարչութիւններն ալ թաղային մատակարարութեանց կարգը կ'իջեցնէ. մինչդեռ կեդրոնին մէջ Պատրիարքը եւ գաւառացի մէջ առաջնորդները կայսերական հրովարտակներով հաստատեալ իշխանութիւններ ըլլալով Սահմանադրութիւնը զատնք վարչութիւն կանուանէ, իսկ թաղական խորհրդոց պաշտօնը թաղային մատակարարութիւն: Եթէ բառերը միացնենք իսկ, պաշտօնները չեն կրնար միանալ եւ համաձայնիլ, եւ եթէ պաշտօններն ալ միացնել ուղենք, սակայն կայսերական կառավարութեան առջեւ ասոնք չեն կրնար միացեալ համարուիլ. քանի որ թաղերուն մէջ կայսերական կառավարութեանէ հաստատեալ իշխանութիւններ չկան եւ ըլլալու ալ պէտք չկայ, վասն զի մեր թաղային մատակարարութիւնները պարզապէս ընտանեկան մատակարարութեան տիպարն ունին. Մեր թաղերը մէկ մէկ մեծ գերդաստաններ կը կազմեն բազմաթիւ ընտանիքներէ բաղկացեալ, որոնց իւրաքանչիւրն իր եկեղեցւոյն, վարժարանաց եւ կարօտելոց պիտոյքները կը հոգան: Ինչպէս գերդաստանի մը մէջ անոնք որ ծախուց կը մասնակցին, իրաւունք ունին ձայն ունենալու նոյն գերդաստանին գործոց մէջ, եւ մատակարարութեան համար մէկը կ'ընտրեն. ասանկ ալ Վերաբըննիչ յանձնաժողովոյ առաջարկութեանը համաձայն

թաղերուն մէջ անոնք ձայն պիտի ունենան, որ թաղին պիտոյից ծախուցը կը մասնակցին ուղղակի տրովք եւ թաղին մատակարար խորհուրդը պիտի ընտրեն. ասանկով Ռուսիոյնեան էֆէնտիին երկուրդ կը փարատի եւ թաղերուն մէջ գործը ոչ թէ ամբողջին կը մնայ, այլ տուրք տուող ազգայնոց:

Սահմանադրութիւնը Ազգին քնական փաճակին վրայ դժուած ըլլալով, ինչ որ թաղին կը վերաբերի՝ թաղին յատկացուցած է, եւ ինչ որ կեդրոնին կեդրոնին. թաղերն իրենց մատակարար խորհուրդը կ'ընտրեն, բայց միանգամայն իրենց երեսփոխանը կ'ընտրեն կեդրոնին համար, եւ կրսեն անոնց, զացէք եւ կեդրոնական Վարչութիւնն ընտրեցէք ու հրակեցէք ինչպէս Ազգին հանրական խնդրոց վերայ, նոյնպէս եւ մեր թաղային մատակարար խորհրդոց վրայ. անոնցմէ որոշեալ ժամանակներ համար առէք. եթէ անարժան գտնէք իրենց պաշտօնին մինչեւ իսկ լուծեցէք. շիմա Ռուսիոյնեան էֆէնտիին նոր առաջարկութեամբը Սահմանադրութեան այս հիմնական ընթացքը վեր ի վայր կը տապալի, որուն մանրամասն բացատրութեանը հարկ չեմ տեսներ այժմ մըտնել: Սակայն ըստ որում Ռուսիոյնեան էֆէնտիին կեդրոնական, գաւառական եւ թաղական երեք կարգ եւ իրարու հաւասար իշխանութիւններ կ'ենթադրէ մեր Ազգին մէջ, հարկ կը հարկում հոս Նիկեոսեան էֆէնտիին ուշադրութիւնը հրաւիրելու, որ կըսէր թէ ինչ որ մայրաքաղաքս ունի, պէտք չէ որ գաւառներն ալ ունենան. ապա սրչափ եւս առաւել թաղերը . . . :

Ատենապետ փաշան ընդմիջելով ատենաբանը հրաւիրեց մանրամասնութիւններէ խոյս տալ եւ ընդհանուր սկզբանց վրայ ամփոփել իւր ատենաբանութիւնը:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ատենապետ փաշան խօսքն ընդհանրութեան վրայ է ըսելով կընդմիջէ ատենաբանները. բայց կարծեմ թէ այդ ընդհանրութեան բառին սղին ոչ ոք կըրցած է հասկնալ, զի եւ ոչ մէկն ընդհանրութեան վրայ խօսեցաւ, ուստի պէտք է որ Ատենապետ փաշան այդ կէտը բացատրէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Թող ներէ Օգոստէն էֆէնտիին եթէ յուշ ամեմ նախ թէ ըստ կանոնի զիւանէն խօսք չառած պէտք չէր խօսիլ, երկրորդ իւր առարկութիւնն իրաւացի պիտի լի-

նէր եթէ ժողովոյս մէջ այնպիսի անձինք գրտնուէին՝ որ չը հասկնան ընդհանրութեան բառին սղին: Ընդհանրութեան վրայ խօսիլ տալ ուղեովս՝ չը կարծուի թէ Դիւանը դադարեցնել կուզէ վիճարանութիւնը, ընդհակառակն երբ պահ մ'առաջ ձեռքէ ոմանք դադար առաջարկեցին, եւ դուրս ելան, Դիւանը չուզեց ընդունիլ եւ շարունակել տուաւ: Իմ պարտքս է ատենաբանից խօսքերը յուղղութիւն եւ ի կարգ մտցնել եւ չէ թէ դադարեցնել: Այս նպատակաւ կը հրաւիրեմ ֆախազեան էֆէնտիին շարունակել իւր խօսքը:

Իսկ գալով ընդհանրութիւն բառին բացատրութեան՝ յայտ իսկ է թէ ինչիւր մը ունինք քննութեան ենթարկեալ, տեղեկագիր մ'ունինք անոր վրայ յանձնաժողովէ մը ծրագրեալ, եւ Չ տեղեկագիր ասոր վրայ զիւանէ մը իմաստասիրեալ. ասոնք խնդրոյն լուծմանն համար մասնաւոր սկիզբ մ'ընդունեն են. այն կրնանք քննել. բաց ասկէ, խնդրոյն մէջ էական կէտեր կան զոր օրինակ վարչական մարմնոյ կազմակերպութիւնը, երեսփոխանական եւ թաղական ընտրողութեան պայմանները, վերաբըննութեան սահմանափակ կամ անպայման ժամանակաւ եւ եղանակաւ կատարվելու եւն. ասոնք եւ ասոնց նման խնդրոյն ոգւոյն, ըսկըզբանց եւ ընթացից վերաբերեալ կէտերը անոր ընդհանրութիւնը կը կազմեն: Միթէ ասոնք չը զիտցող կան մէջերնիս: Խօսինք, վիճենք նախ եւ միմիայն ասոնց վրայ. միշտ ժամանակ ունինք ետքը յօդուածոց վրայ ատենախօսելու, իրարու խօսք քննադատելու, իրարու գործ դատափետելու, եւ այլն: Ես կտեսնեմ որ շատ գեղեցիկ ճառեր կը խօսինք, բայց խնդրոյն ոգւոյն թափանցող լոկ անոր վրայ խորհրդածող, եւ ըստ կանոնի վիճարանութիւնը յառաջ վարող չկայ մեջերնիս. ասոր համար յակամայից ատենաբաններն ընդմիջելու եւ յուղղութիւն խնդրոց հրաւիրելու դժբաղդութեան կը հանդիպիմ յարածամ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Թոյլ տուէք որ խօսիմ: Ես իբրեւ Նախաձեռնութեան զիւանէ անգամ երբ չ'ստորագրեցի թաղային ժողովոց հաստատութեան մասը, հարկաւ պատճառ մը ունէի եւ ժողովն ալ այդ պատճառը հասկնալ կուզէ: Առանց քննադատելու Ռուսիոյնեան էֆէնտիին առաջարկած դրութիւնը, միայն անոր յառաջ բերած գլխաւոր փաստերը կուզեմ

քննել, եւ ապա եզրակացնել թաղային ժողովոց վրայ իմ կարծիքս, որուն համար բաժնուեցանք անկէ եւ այնչափ անօգուտ խօսից տեղի տրուեցաւ:

Ռուսիոյնեան էֆէնտիին թաղային ժողով կառավարիչ Վարչութեան բնոր թեթեւցունելու համար. ընդհակառակն աւելի պիտի շատնայ Վարչութեան բնոր: Վասն զի մինչեւ ցարդ Վարչութեան բնոր թաղական խորհրդին եւ թաղեցւոց մէջ ելած վէճերուն վրայ էր, ասկէ ետքը թաղային ժողովի, թաղական խորհուրդի եւ թաղեցւոց մէջ եղած վէճերուն վրայ պիտի ըլլայ. թաղերուն մէջ որչափ պաշտօնական մարմինները շատնան, այնչափ ասոնց իրարու հետ ունեցած յարաբերութենէն շփոթութիւնք պիտի ծագին եւ Վարչութեան բնոր պիտի շատնայ: Թողունք նաեւ թաղային ժողովի եւ Վարչութեան մէջ ծագելիք իրաւասութեան շփոթութիւնները, եւ այս պատճառաւ թաղեցւոց մէջ ծագելիք երկպառակութիւնները: Իսկ մեր դնենք թաղային ժողով հրաւիրելու, կառավարելու եւ անոր որոշումները գործադրելու իշխանութիւն մը չը գտնուիլը. վասն զի ասոնց Պատրիարքի կամ պատրիարքական Տեղապահի Ազգային ժողովոյս որոշումներն ինչ կրնան ըլլալ. նոյնպէս եւ ասոնց Առաջնորդի կամ առաջնորդական Տեղապահի ինչ կրնան ըլլալ գաւառական ժողովի որոշումները. ուրեմն թաղային ժողովի նախագահութիւնն ով պիտի վարէ, եւ այդ նախագահութիւնը ինչպէս պիտի գործադրէ թաղային ժողովոյ որոշումները, Այս շփոթ վիճակին մէջ ոչ ապաքէն կեդրոնական եւ Պաւառական վարչութեանց բնոն աւելի պիտի ծանրանայ: Ռուսիոյնեան էֆէնտիին կըսէ թէ թաղային ժողովներն 50 հոգիէ պէտք է բաղկանան. բայց եթէ թաղի մը մէջ 50 հոգի կայ ընդամենն կամ աւելի նուազ, ինչ պիտի ընէ այն ատեն . . . :

(ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — Թուոյն վրայ չէ խընդիրը):

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ինչու ուրեմն ասոր խօսքն ըրէք:

(ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — Երեսփոխան մը ըստ կանոնի հարցում չկրնար ընել ուրիշ երեսփոխանի):

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ի՞նչպէս կարելի է այս նիւթերուն վրայ չխօսիլ. երբ ասոնք Ձեր առաջարկութեան փաստերն են. պարտական

եմ գոնէ անոնց վրայ հարեւանցի կերպով դիտողութիւններս ընել . որպէս զի հերքելուս պատճառները բացատրած ըլլամ : — Հաղարաւոր փոքրաթիւ բնակիչներէ բաղկացեալ թաղեր ունինք , սնոնք թէ թաղական ժողով եւ թէ թաղական խորհուրդ պիտի ունենան , եւ թաղական ժողովի անդամ մը թաղական խորհուրդի անդամ չպիտի ըլլայ . մարդն ուրկէ պիտի գտնուի չգիտեմ : Աւրիշ օրինակ մ'ալ տանք առաջնորդանիստ քաղաքաց վրայ . օրինակի համար պիտի ըսենք Նիկոմիդիոյ սրբազան առաջնորդին , որ մեր ամենապատիւ Ս. Պատրիարքն է , թէ Նիկոմիդիոյ մէջ պիտի ունենանք այսուհետեւ թաղային ժողով ալ . որով անդ պիտի գտնուին դաւաճական ժողով , կրօնական , քաղաքական եւ տեսուչ խորհուրդներ . կամ թէ ուսումնական եւ տնտեսական խորհուրդներ , թաղային ժողով եւ թաղական խորհուրդ . միեւնոյն ժողովրդէն այսչափ պաշտօնական մարմիններ գոյացնել , մանաւանդ գաւառական ժողով եւ թաղային ժողով կազմել՝ սրչափ չփոթութիւն է . ինչ դժուարագործադրելի բան . մինչդեռ առաջնորդանիստ քաղաքաց մէջ՝ ուր մէկ եկեղեցի կայ , թաղական խորհրդոց գոյութիւնն աւելորդ կը դատուէր , իբրեւ չփոթութեան առարկայ ուսումնական եւ տնտեսական խորհրդոց հետ , այժմ պիտի ըսենք թաղային ժողով ալ կազմեցէք , եւ եթէ գաւառական ժողովի անդամ մը թաղային ժողովի անդամ ըլլալու արդեւք մը չըլլայ , ան ասեն միեւնոյն անձինքը պիտի ըլլան գաւառական եւ թաղային ժողովոց անդամ . ինչ չփոթութիւն պաշտօնավարութեան մէջ , մանաւանդ զեռ նոր վարժուելու վրայ եզոզ ժողովրդի մը համար : Ասոնք Սահմանադրութիւնը գործադրելու ոչ միայն դժուարութիւն կուտան , այլ եւ անկարելիութիւն :

Անցնինք ուրիշ կէտի մը : Սրբազան Նախագահը նախորդ նիստին մէջ Ռուսինեան էֆէնտիին մէկ խօսքին շիտակ է ըսաւ . ես սրտալ է ըսի . գիտէք , Սրբազանին եւ Ռուսինեան էֆէնտիին ըմբռնմանց մէջ մեծ վիճակայ . Սրբազանը թաղին երեւելիներէն ծերակոյտ մը սահմանուի ըսած է , որով աւելի հսկող մարմին մը ըլլալը կուզէ թաղին մէջ , քան թէ համարառու . իսկ Ռուսինեան էֆէնտիին ուրիշ բան կրտէ : Բայց Սրբազանին ըսած հսկող մարմինը ո՞վ պիտի զնէ . . . :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ . — Պատրիարքարանը ֆափաքեալ Ս. էֆ . — Եթէ ընտրութիւնն ալ Պատրիարքարանն ընել կառավարկէք , պէտք է զիտնանք թէ այդ առաջարկութիւններն իրարու բոլորովին հակառակ են : (Ընդհանրապէս եւ չէրէ) :

Արդ՝ թաղային ժողովոց մասին իմ կարծիքս համառօտիւ բացատրեմ : Ամէն խորհող անձանց յայտնի կերեւի թէ փոքրաթիւ բնակիչ ունեցող գիւղորդէից եւ նոյն իսկ առաջնորդանիստ քաղաքաց մէջ անգործադրելի է թաղային ժողովոյ դրութիւնը . արդ՝ ինչ օրէնք որ ամէնուն չվերաբերիր , այն՝ Սահմանադրութեան մէջ տեղ չունի եւ չկրնար ունենալ :

Գարձեալ , օրէնքը վերաքննելու եւ փոխելու ատեննիս աւելի եւս զգուշաւոր պէտք է ըլլանք . որպէս զի ժողովրդեան ընտելացումը չխանգարուի , եւ նորէն այբուբենի չսկսի . ըսել կ'ուզեմ թէ պէտք է որ մենք պահպանողական յառաջադիմութիւն ունենանք , քայլ առ քայլ յառաջ երթանք . այսօրուան պէտքերնիս հոգանք , չըլլայ որ բոլորովին փոխելով դժուարութեանց հանդիպինք : Հազիւ թէ ժողովուրդը դրուած օրէնքին վարժուի սկսած է , եւ ցաւալի է ըսել թէ տակաւին գաւառաց բազմաթիւ գիւղերուն մէջ թաղային խորհուրդներ անգամ կազմուած չեն , այժմ նոր անունով եւ նոր պաշտօնով ժողով մը հաստատելը , մանաւանդ թաղային մատակարարութեան մէջ , որ անմիջապէս ժողովրդեան հետ վերաբերութիւն ունի , շատ չփոթութեանց եւ դժուարութեանց տեղի կուտայ : Այս պատճառաւ ես արժան կը դատեմ փոխանակ սահմանադրութեան մէջ նկատողութեան առնելու , թաղային կանոնադրութեան մէջ նկատողութեան առնուլ այս խնդիրը , կանոնադրելով՝ եթէ ժողովս արժան դատէ , որ Վարչութիւնը հարկ եղած ատեն ընտրողներն հրաւիրէ եւ անոնց կարծիքն առնու թաղային խնդրոյ մը վրայ . կամ եթէ բազմաթիւ են ընտրողք , ասոնցմէ ընտրեալ ծերակոյտ մը կամ պատգամաւորութիւն մը կամ թաղային ժողով մը յատկացնէ , ինչ անունով որ կ'ուզուի , որով ըստ այնմ փորձառութիւն կ'ունենայ ապագային մէջ :

Կը յուսամ որ Տեսնք երեսփոխանք , իմ այս դիտողութիւններս ձեր խորին ուշադրութեանն ու քննութեանն առարկայ ընել կը բա-

րեհանճիք , միանդամայն նկատողութեան առնելով Ռուսինեան էֆէնտիին առաջարկեալ օրինական ծրագրին սա կէտերը . « Թաղին ընդհանուր գործերը վճարար կը սնորինէ . տարուէ տարի թաղին վիճակագրութիւնը կը հաղորդէ Վարչութեան » , եւ ոչ թէ համարաւորութիւնը . ասոնք խնդրոյն զազանիքներն են :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ . — Ի՞նչ զազանիք կայ . ըսէք , ինչ կը նշանակէ այդ խօսքը :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ . — Մեր մէջ անցած խօսքերուն համար կըսեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Ձեր կարծիքը ծանուցիք ժողովին , ալ ինչ հարկ կայ Ռուսինեան էֆէնտիին խօսքերը քննադատելու . մինչդեռ այժմ տեղը չէ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ . — Ես խնդրոյն խորը չըմտայ . ուրիշ ատենի թողուցի . միայն այդ կէտերը ժողովին ուշադրութեանն յանձնելու ղեցի :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ . — Կը խնդրեմք փափաքեան էֆէնտիին որ ըսելիքներն ուրիշ ատենի չթողու . ըսէ ու ամբողջացնէ , որ ժողովը հասկնայ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ . — Այժմ հարկ չէ այդ կէտերուն վրայ խօսիլ . ես ի սկզբան ալ ըսի թէ այս խնդրոյն մանրամասն բացատրութեանը չպիտի մտնեմ . բայց երբ Ռուսինեան էֆէնտի կրտէ թէ . « թաղական խորհուրդներն հսկող ու համարառու չունին » . կրնամ յիշեցնել Ձեզ , տեսնք , թէ Սահմանադրութիւնն արդէն այդ հսկող ու համարառու մարմինը դրած է . տեսուչ խորհուրդներն են , զորս անտես ըրած է Ռուսինեան էֆէնտի :

Գալով երեսփոխանաց բաշխման եւ ընտրութեան եղանակին , ասի իբրեւ սահմանադրական վերաքննելի խնդիր հոս դալու բնաւ տեղի չունի : Ռուսինեան էֆէնտիին կ'առաջարկէ Պօլիսը 5 շրջանակի բաժնել , ժողովը կուզէ նէ բոլոր Պօլիսը 1 շրջանակի թող վերածէ . Սահմանադրութիւնն ատոր ալ բնաւ չհակառակիր :

(Այ՛ , այ՛)

Բացէք Սահմանադրութիւնը եւ տեսէք որ կրտէ թէ 80 աշխարհական երեսփոխան Պօլիսը թաղերէն կ'ընտրուին . միացեալ թաղից սկզբունքն ալ կայ հոն . ուստի ժողովս երբ ուզէ կրնայ Պօլիսը 1, 2, 3, 4 եւ այլն շրջանակներու

բաժնել , եւ իր ներքին կանոնադրութեան մէջ յաւելցնել :

Բայց այս փոփոխութեամբ ձեռք բերելու զուած յաջողութիւնը չեմ յուսար թէ կարենամք գտնել . զի նոյն է թաղի մը կողմէն 20 քուէով ընտրեալ երեսփոխանը , եւ 10 թաղից կողմէն 200 քուէով ընտրեալ երեսփոխանը . ասոր դարմանը ժամանակէն կը յուսացուի եւ ոչ Սահմանադրութեանն . ժամանակը պիտի կարենայ վառել եւ մղել ընտրողներն իրենց իրաւունքը գործադրելու : Այս պատճառաւ 10-20 քուէով ընտրելոց վրայ օրինական իշխանութեան թերութիւնն բնաւ չկայ . զի Սահմանադրութիւնը բացարձակապէս կը տրամադրէ թէ օր առաջ ծանուցեալ եւ որոշեալ ժամուն քուէ չբերողները ետքէն բողոքելու իրաւունք չունին . եւ եկած քուէներուն արդիւնքն օրինական եւ վաւերական է : Ասի ժամանակին պահանջումն է , զոր Սահմանադրութիւնը հեռատեսութեամբ տրամադրած է . ինչպէս նաեւ Պօլիսը 100, եւ գաւառաց 40 երեսփոխան տալը . վասն զի եթէ ասանկ չըլլար՝ պէտք էր որ Պօլիս 5 տար , եւ գաւառներն 145 . ասի չենք կրնար սահմանել , եւ իրաւացի պատճառներով , զի դեռ ժամանակը չէ հասած . եւ արդարեւ ժամանակին ընելիքը մարդիկ չեն կրնար ընել :

Երկու խօսք ալ պատուանդանին վրայ . Ռուսինեան էֆէնտիին կը սխալի երբ երեսփոխանաց բաշխումը տեղերու վրայ կընէ Վաշիշիւն եւ Բէշիշիւն գեղեցիկ բառերու շքշանակի վրայ . ընդհակառակը Սահմանադրութիւնն ընտրողաց թուոյն վրայ այդ պատուանդանը դրած է արդէն . եւ 12 տարի առաջ , նոյն իսկ Ատենապետ փաշային ձեռք , որ Սահմանադրութեան առաջին Գործադիր Յանձնաժողովին Ատենապետն էր , 5800 ի մօտ ընտրողաց վրայ բաշխուեցան 80 երեսփոխանք . եւ կը յիշեմ թէ 45 ընտրողի 1 երեսփոխան վիճակելով , թաղ մը քանի 45 ընտրող ունէր , այնչափ երեսփոխան տալ վիճակեցաւ անոր . եւ ընդհակառակն 45 էն նուազ ընտրող ունեցողներն ալ միացան . օրինակի համար 25 ընտրող ունեցողին հետ 15 կամ 18 ունեցողը միանալով 1 երեսփոխան տուաւ . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Մի մտնէք մանրամասնութեանց մէջ , եւ եզրակացուցէք խօսքերնիդ , կաղաչեմ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Շատ աղէկ, կեղ-
րակացնեմ խօսքս թէ երեսփոխանաց բաշխման
մասին առաջարկութիւնը Սահմանադրութեան
վերաքննութեանը չվերաբերիր, այլ ներքին
կանոնադրութեան. եւ այս խօսքն անոր հա-
մար կը կրկնեմ, վասն զի նոյն իսկ Ռուսիոյեան
էֆէնտի յայտարարեց թէ որեւէ կանոնական
առաջարկութիւնները պիտի մերժէ, եւ Սահ-
մանադրութեան մէջ այդպիսեաց թիւն աւել-
ցնելու տեղի չպիտի ապա ամենեւին այսու-
հետեւ, եւ ինք կանոնական առաջարկութիւն
ներկայացոյց :

Գալով եկեղեցական երեսփոխանաց աշ-
խարհականներէն ընտրութեան առաջարկու-
թեանը. եթէ Ռուսիոյեան էֆ. ի առաջարկու-
թեանց մէջ սահմանադրական խնդիր մը կայ,
այս իսկ է. բայց ինչ պատճառ կայ այս առա-
ջարկութիւնը բերելու : Եթէ Ռուսիոյեան է-
ֆէնտին ըսեր թէ վերցնենք Սահմանադրու-
թեան մէջէն եկեղեցականաց 20 թիւը, եւ
աշխարհական ու եկեղեցական խառն ընտրուին
առանց որոշեալ թիւ ունենալու, ըստ արժան-
եաց, ան ատեն բան մը չէի ունենար ըսելու.
բայց 20 թիւը պահելով եղած այդ առաջար-
կութեան մէջ անպատեհութիւն կը նկատեմ,
ի հարկէ պէտք մը նկատած են օրէնսդիրք որ
այդ 20 թիւը սահմաններ են, ոչ աւելի եւ ոչ
պակաս. եւ այս ընտրութիւնն ալ իրենց՝ եկե-
ղեցականաց թողած են. եւ եթէ ի Պօլիս մի-
այն 20 եկեղեցական դատուէին, բնական ի-
րաւամբ անոնք անդամ պիտի համարուէին Ադ-
գային ժողովիս : Գաւառաց վրայ աւելի զիւ-
րաւ կրնամ բացատրել. Սահմանադրութիւնը
գաւառաց մէջ գործադրուած ատեն՝ մեր Քաղ-
ժողովոյ պաշտօնավարութեան միջոցին՝ տես-
նուեցան առաջնորդանիստ քաղաքներ՝ որ 5-4
եկեղեցական միայն ունէին, եւ սերձակայ գիւղ
ալ չունէին. այս եկեղեցականները՝ որք գաւա-
ռական ժողովոյ պահանջած եկեղեցական ան-
դամոց թիւն ալ չունէին, բնական իրաւամբ
անդամ եղան գաւառական ժողովին, բնական
իրաւամբ անդամ եղան կրօնական ժողովին եւ
մշտապէս անդամ : Կը յիշեցնեմ Իֆէկիճեան է-
ֆէնտին որ վերընտրելութեան սկզբունքը պահ
մ'առաջ չէր ընդունէր. ասանկ տեղերու մէջ
ինչ պէտք է արդեօք ընել :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Մի մասնաւորէք ձեր
խօսքը. բուն խնդրոյն վրայ խօսեցէք եւ եզ-
րակացուցէք, կ'աղաչեմ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Գիւրին է եզրակա-
ցընել թէ՛ Ռուսիոյեան էֆէնտի նոր բերած
առաջարկութեանց թաղային ժողովոց եւ երես-
փոխանաց բաշխման մասը՝ կանոնական, եւ
եկեղեցականաց ընտրութեան խնդիրը յուզելը
անպատեհ համարելով, այս անգամի վերաքն-
նութիւնը կարճ եւ շուտ աւարտելու կողմն են :
Ներեցէք, Ատենապետ փաշա, ըսելու թէ՛

այսչափ ընդհատմանց մէջ ատենաբան մը մին-
չեւ իսկ իր խօսից թեւը կը կորսնցնէ. ուստի
եթէ սխալ մ'ըրի, կը յուսամ որ ժողովին նե-
րողամտութեանը հանդիպիմ : Այսպիսի ծան-
րակշիռ խնդրոյ մէջ անձնական նկատմունք
տեղ չունին. ամենքս ալ մեր պաշտօնը կա-
տարելու պարտաւոր, իբրեւ երեսփոխան այս
գիտողութիւններս ներկայացուցի ժողովին.
ալ իրեն կը մնայ արժանը անօրինել :

ԱՏԵՆԵՐ. — Կեցցեա :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ատենին փակման
ժամը հասած ըլլալով, վերաքննութեան խնդ-
րոյն վիճարանութեան շարունակութիւնը յա-
ջորդ նստին պիտի մնայ :

Այսօր 5-6 ատենաբան խօսեցան, եթէ վի-
ճարանութիւնը գալ նիստին ալ շարունակուի,
յուսամ որ ընդհանուր սկզբանց վիճարանու-
թիւնը կրնայ դոցուիլ եւ առաջին ընթերցու-
մէն ետեւ յօդուածոց վիճարանութեան կրնանք
անցնիլ : Այսօրուան վիճարանութեանց մէջ ի-
րարու խօսքերը քննադատելու պարագաներ
պատահեցան, եւ ես իբր Ատենապետ պարտա-
ւորեցայ ընդմիջումներ ընել վիճարանութեան
ուղղութիւն տալու մտք. այս իմ պարտքս էր
ընել, եւ կցաւիմ որ ասանկ պարտք մը կա-
տարելու հարկին մէջ գտնուեցայ. բայց կյու-
սամ որ ուրիշ անգամ ատենաբանք խնդրոյն
չաւղէն չ'խոտորելով տեղի չ'են տար Ատենա-
պետին ընդմիջումն ընելու : Առաջիկայ նիստն
15 օրէն պիտի ըլլայ, եթէ արդեւք մը չկայ,
եւ բնականաբար Յրակարգ պիտի ունենանք
վերաքննութիւն Սահմանադրութեան. — Շա-
րունակութիւն վիճարանութեան խնդրոյն ընդ-
հանուր սկզբանց եւ տրամադրութեանցը վրայ :

Ատենապետ փաշային այս վերջին յայտա-
րարութիւնն առանց գիտողութեան ԸՆԴՈՒՆ-
ՈՒՆՅԱԻ ժողովէն :

Ատենը գոցելէն առաջ Ատենապետ փա-
շան ծանոց ժողովին թէ Գաստիարակութեան
գիւրանին Ատենապետի ընտրութեան տեղեկա-
գիրը նոր հասեր է եւ թէ Եռուսու Ֆեան Տիգրան
էֆէնտին նոյն գիւրանին Ատենապետ ընտրուե-
ր է : Եւ յաւելցնելով որ մէկ քանի գիւրաններ
տակաւին չեն ընտրած իրենց Ատենապետները,
հրաւիրեց քանոնք՝ որ ընտրութիւննին կատա-
րեն : Նոյնպէս այն գիւրաններն՝ որոնք իրենց
յանձնուած խնդրոց կամ թղթոց պատասխան-
ները դեռ չէին բերած, հրաւիրեց աշխատիլ
իրենց պատասխանները որ առաջ բերելու :

Ատենը ժամ 10 ին քառորդ մնալով գոց-
ուեցաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ
Ն. Ս. ԱՄԵԱՅԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ
Ս. ԱՍԼԱՅԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Տ. Խորէն	Արքեպիսկ	Նար-պէյ	ԱՏԵՆԱՊԵՏ
2. Տ. Ներսէս	Վ.	Աստուծան	ԱՏԵՆԱՊԵՏ
3. Տ. Ամբրոսիոս	»	Իսկէնտէրեան	
4. Տ. Գէորգ	»	Գերձակեան	
5. Տ. Զաքարիա	»	Զիւմրի թճեան	
6. Տ. Խորէն	»	Կիւրոյեան	
7. Տ. Կարապետ	»	Սերոբեան	
8. Տ. Յովնանէս	»	Փափաղեան	
9. Տ. Արիստակէս	Ք.	Մամբրէեան	
10. Տ. Գրիգոր	»	Աբամեան	
11. Տ. Գրիգոր	»	Աճէմեան	
12. Տ. Երեմիա	»	Խաչիւղի	
15. Տ. Սուքիաս	»	Ստեփաննոսեան	
14. Տ. Վրդանէս	»	Միջաղիւղի	

ԲԱՂԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Սիմոն	Մաքսուտեան	պէյ	ԱՏԵՆԱՊԵՏ
2. Միքայէլ	Մամիկոնեան	էֆէնտի	ԱՏԵՆԱՊԵՏ
3. Աբրահամ	Հարենց	»	
4. Աստիա	Իկիտապաշեան	»	
5. Խաչիկ	Ալեանաքեան	»	
6. Կարապետ	Փափաղեան	»	
7. Մկրտիչ	Խոսեան	»	
8. Յակոբ	Կոստանդ	»	
9. Յարութիւն	Գասիմաճեան	»	
10. Սարգիս	Աբրահամեան	»	
11. Սարգիս	Արապեան	»	
12. Սիմոն	Միքայէլեան	»	
13. Սիմոն	Նորատունկեան	»	
14. Ստեփան	Ինչիրեան	»	

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵՒԻՆԱԿԱՆ ՍՆՅՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՂՈՅ ԾԱԿՈՒՑ ՅԱՏԿԱՑԵԱԼ

Կը ճախուշի ի Գիշանաւան Պատրիարքարանի, և Ղարաբիոյ Ս.
Լուսաւորի, Եկեղեցւոյ բանկայր և Հայ գրաւմանարանց քով.